

# Հանս Բրիստիան Անդերսեն



## ՀԵՔՒԱԹՆԵՐ

ՀՏԴ 821.113.4-93 Անդերսեն  
ԳՄԴ 84(4Դ)  
Ա 581

Թարգմանիչ և խմբագիր՝  
**Դավիթ Սամվելյան**

Նկարիչ՝  
**Նահրա Ահարոնյան**

Անդերսեն Հանս Քրիստիան

Ա 581 Հեքիաթներ / Հանս Քրիստիան Անդերսեն.- Եր.: Էդիթ Պրինտ,  
2022.- 112 էջ:

Թարգմանությունը կատարվել է Jean Hersholt-ի անգլերեն (1949թ.) և Анна Васильевна Ганзен-ի ռուսերեն (1893-1895 թթ.) թարգմանությունների և բնօրինակի համադրմամբ:

Թարգմանության հեղինակային իրավունքները պաշտպանված են: Դրանց օգտագործումը՝ արտատպումը կամ էլեկտրոնային հարթակներում մասնակի և ամբողջական տեղադրումը, աուդիո տարբերակով տարածումը առանց թարգմանչի և հրատարակչի թույլտվության, արգելված է ՀՀ օրենսդրությամբ:

ՀՏԴ 821.113.4-93 Անդերսեն  
ԳՄԴ 84(4Դ)

ISBN 978-9939-75-857-2

© Էդիթ Պրինտ  
© Դավիթ Սամվելյան





## Սիրելի՛ ընթերցող,

Հեքիաթների այս ժողովածուն քո առջև կբացի Անդերսենի զարմանահրաշ, բարի և պատկերավոր աշխարհը, կշրջես Դանիայի քաղաքներում և դղյակներում, կհանդիպես անվախ անագե զինվորիկին, կգտնես աշխարհի ամենագեղեցիկ վարդն ու կտեսնես, թե ոնց է ձնծաղիկը համառորեն ձգվում դեպի արևը, կհասնես կապույտ երկնքին՝ թռչելով արքայազն կարապների հետ, Կարենի պարող ու վազող մաշիկներով կմտնես փոքրիկ Իդայի ծաղիկների թագավորությունն ու կհայտնվես փոքրիկ Տուկի և ծեր կաղնու երագներում, կճանաչես աշխարհի ամենանուրբ արքայադստերն ու լուցկիներ վաճառող աղջկան:

Այս գրքում ընդգրկված հեքիաթները չեն ընտրվել տարիքային մեկ խմբի համար, այստեղ դու կգտնես հեքիաթներ, որոնք կարող են և պետք է կարդան նաև մեծահասակները («Ջրի կաթիլը», «Ճարպամոմը»), կան կարճ ու

երկար հեքիաթներ, որոնց մի մասը նախկինում ծանոթ է եղել քեզ, իսկ մի մասն էլ առաջին անգամ է հայերեն ներկայացվում:

Գրքում տեղ գտած առաջին հեքիաթը՝ «Ճարպամոմը», Անդերսենի գրած առաջին հեքիաթն է: Գիրքը եզրափակվում է այնպես, ինչպես ավարտվում է տարին, բայց ես ուզում եմ, որ Ամանորին նայես շուրջբոլորդ ու եթե գտնես լուցկիներով աղջկան, ապա անպայման հրավիրես տուն և այդ գեղեցիկ տոնը նաև նրա հետ նշես, որից հետո արդեն Սուրբծննդյան տոնին կլինես ավելի պատրաստ՝ իմանալով, որ մի բարի գործ ես արել:

Դե, ուրեմն, սկսիր այս գրքի ընթերցումն ու փորձիր կյանքում ստեղծել քո իսկ հեքիաթը:

***Դավիթ Սամվելյան***






**Կ**րակը բոցկլտում էր կաթսայի տակ, թանձրուկը թշուամ և ցայտում էր. ահա այդպես ծնվում էր Ճարպամոմը: Եվ տաք օրորոցից դուրս եկավ Մոմը՝ անբասիր, ամբողջական, սպիտակաթույր ու սլացիկ: Մոմը ստեղծվել էր այնպես, որ բոլոր տեսնողները հավատային, որ նա պայծառ ու հիանալի ապագա է խոստանում և այդ խոստումն անպայման պահելու և իրագործելու է:

Գառնուկը նրա մայրն էր, հալոցի կաթսան՝ հայրը: Մորից նրան բաժին էին ընկել շլացուցիչ սպիտակ մարմինն ու կյանքի մասին պատկերացումը, իսկ հորից նա ստացել էր ձգտումը դեպի բոցավառվող կրակը, որը մի օր անցնելու էր իր միջով՝ ոտքից գլուխ, և լուսավորելու էր իր կյանքը:

Հենց այդպես ստեղծվեց ու աճեց Մոմը և ամենալավ ու ամենալուսավոր սպասումներով նետվեց դեպի կյանքը: Կյանքը, որ Մոմն ուզում էր ճանաչել և, եթե ստացվեր, դրանում գտներ իր տեղը, նրան հանդիպեցրեց բազմաթիվ անըմբռնելի ու հե-



տաքրքիր արարածների, որոնց հետ նա ընկերացավ: Սակայն պարզվեց, որ աշխարհն այդքան էլ լավը չէր, այնտեղ շատ էր եսասիրությունը, իսկ Ճարպամոմի մասին այդտեղ ընդհանրապես չէին էլ մտածում: Մարդիկ չէին հասկանում նրա օգտակարությունը, այդ պատճառով էլ Մոմն օգտագործում էին միայն իրենց շահի համար՝ վատ վարվելով նրա հետ:

Սև մատներն ավելի ու ավելի մեծ հետքեր էին թողնում անմեղության մաքուր գույնի վրա, և ի վերջո այն պատվեց իրեն շրջապատող աշխարհի կեղտով, որը շատ էր մոտեցել: Նրա ուժերից վեր էր դիմանալը, քանզի ի վիճակի չէր տարբերել մաքուրն անմաքուրից, թեպետ խորքում նա դեռևս անմեղ էր ու անեղծ:

Մոմի կեղծ ընկերները հասկացան, որ չեն կարող թափանցել նրա ներսն ու զայրացած դեն նետեցին նրան՝ համարելով անօգտակար իր:

Մոմի կեղտահար, սև մարմինն իր խորքում թաքցրեց ունեցած լավագույնը, մարդիկ էլ, վախենալով կեղտոտվելուց ու սևանալուց, նրանից հեռու մնացին:

Բոլորից լքված խեղճ Ճարպամոմը չգիտեր ինչ աներ: Նա հասկացավ, որ իրեն օգտագործել են միայն որպես Բարին թաքցնելու և չարը տարածելու միջոց: Ինքն իրեն անսահման դժբախտ էր զգում, քանի որ կյանքը զուր էր անցկացրել և միգուցե կեղտոտել էր իրեն շրջապատող լավագույնը: Մոմը չէր հասկանում՝ ինչու և ինչի համար է ստեղծվել, ինչու է այս աշխարհ եկել... Հավանաբար, մտածում էր նա, ինքս ինձ և ուրիշներին եմ կործանում:

Որքան շատ ու խորն էր մտածում, այնքան ավելի էր տրտմում: Իր գոյության մեջ ոչ մի օգտակար բան չէր տեսնում՝ ծնվելիս նրան տրված կյանքի նպատակը կորչում էր:

Ասես մի սև ժապավեն էր ծածկում նրա աչքերը:

Բայց ահա նրա առջև առկայծեց Հրահանը, որը Մոմին ավելի լավ էր ճանաչում, քան Մոմն ինքն իրեն, քանզի Հրահանը պարզորոշ տեսնում էր արտաքին շերտի միջով և նրա ներսում շատ Բարիք տեսավ: Հրահանը մոտենում էր, և դա Մոմի մեջ հույս էր արթնացնում: Եվ նա բռնկվեց, ու նրա սիրտը հալչեց:

Մոմը բոցավառվեց ամուսնության ջահի պես և իր լույսով լուսավորեց շուրջբոլորը, իրական, հավատարիմ ընկերների ճանապարհը, որոնք այսուհետ կարող էին փնտրել ճշմարտությունը Մոմի լույսի ներքո:

Մոմի ուժերը ներում էին, որ սնուցեր, պահեր բոցավառ կրակը: Կլորավուն ու գիրգ, ասես նոր կյանքի սերմեր, հոսելով՝ նա կաթիլ առ կաթիլ տալիս էր իր կյանքը՝ ծածկելով անցյալի կեղտը:

Դա ոչ այնքան մարմնական, որքան հոգևոր միություն էր...

Ահա այդպես Ճարպամոմը կյանքում գտավ իր տեղը՝ ապացուցելով, որ ինքն իրական է: Նա վառվեց երկար տարիներ՝ ի հուրախություն իրեն ու մարդկանց...<sup>1</sup>



<sup>1</sup> Այս հեքիաթը Հանս Քրիստիան Անդերսենի գրած առաջին հեքիաթն է, որի ձեռագիրը հայտնաբերվել է 2012 թվին:



**Ց**րտաշունչ ձմեռ էր, պաղ քամի էր փչում, իսկ ներսում ամեն ինչ լավ էր ու հարմարավետ: Հողի և ձյան շերտի տակ՝ իր սոխուկի մեջ պառկած էր ծաղիկը:

Մի օր անձրև եկավ: Կաթիլները ձյան ծածկույթի միջով թափանցեցին հողի մեջ, հավեցին ծաղկի սոխուկին և պատմեցին վերևում գտնվող լույսի աշխարհի մասին: Շուտով արևի շողը, ձյունը փորելով, նրբորեն թափանցեց հողի մեջ, հասավ ծաղկին ու սոխուկին թխկթխկացրեց:

- Ներս արի,- ասաց ծաղիկը:

- Չեմ կարող,- ասաց արևի ճառագայթը:- Ես դեռ այնքան ուժեղ չեմ, որ բացեմ քեզ, իսկ այ՛, մինչև ամառ ուժ կհավաքեմ:

- Էրբ է ամառ լինելու,- հարցրեց ծաղիկը և այդ հարցը կրկնեց ամեն անգամ, երբ արևի նոր ճառագայթ էր իջնում նրա վրա: Բայց դեռ շատ կար ամռանը. ձյունն ամբողջովին չէր հալչել, իսկ հավերժական թվացող ամեն գիշեր ջրերը պատվում էին սառույցի շերտով:



- Որքան է տևելու, որքան է տևելու,- ասաց ծաղիկը,- ես խայթոց և թրթիռ եմ զգում: Ես պետք է ձգվեմ, պետք է երկարեմ ու բացվեմ, ես պետք է դուրս գամ և հանդիպեմ ամռան հետ. դա հավերժական ժամանակ է լինելու:

Եվ ծաղիկը ձգվեց ջրից փափկած, արևաթափանց հողից ու ձնից ջերմացած իր նուրբ պատյանում: Շուտով ձյան տակի հողը ճեղքեց բաց կանաչ կոկոնով ցողունը՝ շղարշի պես շրջապատված նեղլիկ ու հաստլիկ տերևներով: Ձյունը դեռևս սառն էր, բայց ողողված էր արևի շողերով, այն արդեն այնքան փխրուն էր, որ շողերը հեշտությամբ էին անցնում դրա միջով, ավելին, շողերն արդեն ավելի էին ուժեղացել:

- Բարի գալրիստ, բարի գալրիստ,- երգեցին նրանք, և ծաղիկը ծիկրակեց ձյան տակից: Արևի շողերն այնպես շոյեցին



և համբուրեցին փոքրիկին, որ նրա կանաչ երակաթելերով ծաղկաբաժակն ամբողջովին բացվեց: Նա երջանկորեն ու համեստորեն խոնարհեց փոքրիկ գլուխը:

- Թանկագին ծաղիկ,- երգում էին արևի շողերը,- որքան թարմ ու նուրբ ես: Դու առաջինն ու միակն ես: Դու մեր սիրասուն զավակն ես: Դու ավետում ես ամառը, հիասքանչ ամառը: Շուտով ձյունն ամբողջովին կհալչի, սառը քամիները հեռվում կփչեն: Կսկսենք մենք թագավորել: Ամենուր կկանաչի, և ընկերուհիներդ կհայտնվեն՝ կծաղկեն յասամանն ու դեղին ակացիան, իսկ հետո՝ վարդերը, բայց, միևնույն է, դու առաջինն ես այդքան նուրբ ու թափանցիկ:

Այնպիսի երջանկություն էր տիրում, որ կարծես օդն ինքն էր երգում ու զրնգում. արևի շողերը թափանցեցին ուղիղ տերևների ու ցողունիկի մեջ: Եվ այն ձգվեց՝ նրբորեն, փխրուն, բայց, միևնույն ժամանակ, ուժերով լի, պատանեկան գեղեցկության շքեղ ծաղկման մեջ, կանաչ ծոպիկներով իր հանդիսավոր, սպիտակ զգեստով, և սկսեց փառաբանել ամառը: Բայց դեռ շատ ժամանակ կար ամռանը՝ ամպերը ծածկեցին արևը, պաղ քամիներ փչեցին:

- Դու շուտ ես հայտնվել,- նրանք ասացին ծաղկին,- ուժը դեռ մեր կողմում է: Սպասիր՝ կտեսնես և ստիպված կլինես ենթարկվել: Պետք է ներսում մնայիր և ոչ թե շտապեիր ցուցադրել քո նրբագեղ զարդարանքներն արևի տակ: Դեռ ժամանակը չէ:

Յուրտը շարունակում էր ծակծկել: Օրերը հաջորդում էին միմյանց, բայց արևի ոչ մի շող չէր հայտնվում: Նուրբ ծաղիկը ցրտահարվելու էր, բայց ինքն էլ չէր ենթադրում, որ այդքան ուժեղ է. նրան գոտեպնդում էր խոստացված ամռան հանդեպ հավատը: Այն պետք է շուտով գար, չէ՞ որ հենց այնպես

չէին արևի շողերն ավետում դրա մասին: Ծաղիկը վստահորեն հավատում էր խոստմանն ու սպիտակ հանդերձով ամուրկանգնել էր սպիտակ ձյան մեջ՝ գլուխը խոնարհած ծանր ու խիտ ձյան փաթիլների տակ. նրա շուրջը մոլեգնում էին սառը քամիները:

- Դու կկոտրվես,- ասում էին նրանք,- կթռչես ու կսառչես: Ինչ էիր փնտրում այստեղ, ինչո՞ւ խաբվեցիր, արևի շողը խաբել է քեզ: Տեղն է քեզ, ձնծաղիկ:

- Ձնծաղիկ,- ձայն հնչեց վաղորդյան ցուրտ օդում:

- Ձնծաղիկ,- հրճվում էին այգի եկած երեխաները:- Ահա այստեղ հիասքանչ, սիրունիկ, առաջին ու միակ ձնծաղիկն է աճում:

Եվ այդ խոսքերն արևի շողերի պես ջերմացրին ծաղիկին: Երջանկությունից նա անգամ չզգաց, որ իրեն պոկեցին: Ծաղիկը հայտնվեց երեսայի ձեռքում, և մանկան շուրթերը համբուրում էին նրան: Հետո նրան մի տաք սենյակ տարան, հիացան նրանով ու ջրի մեջ դրեցին: Ծաղիկն աշխուժացավ ու վերակենդանացավ, մտածեց, որ ամառ է անսպասելիորեն եկել: Տան աղջիկը, որը հմայիչ փոքրիկ էր, ուներ հարազատ ու սրտակից ընկեր, որն ապրուստը վաստակում





էր գիրք կարդալով. նրանք երկուսն էլ կոնֆիրմացվել էին<sup>1</sup>:

- Նա լինելու է հենց իմ ճնծաղիկը,- ինքն իրեն տղայի մասին մտածեց աղջիկը, հետո վերցրեց հիասքանչ ծաղիկը, դրեց բուրավետ թղթի մեջ, որի վրա գրված էր ծաղկի մասին բանաստեղծություն, որը սկսվում և ավարտվում էր ամառային կատակով. «Սիրելիս, դարձիր իմ ճնծաղիկը, իմ ձմեռային հիմարիկը»: Ահա այդպես նա ծաղրում էր նրան՝ ասելով, թե իրենց մոտ ամառ է: Այո, դա էր գրված բանաստեղծության մեջ, որն աղջիկը ծալեց՝ ներսում դնելով ծաղիկը: Այնքան մութ էր ներսում, կարծես նորից սոխուկի մեջ էր:

Ապա աղջիկը ծրարեց նամակը և ուղարկեց ընկերոջը: Ծաղիկն ուղարկվեց ճամփորդության՝ հայտնվեց փոստային պարկում, սեղմվեց ու ճզմվեց. տհաճ էր, բայց դրա վերջն էլ եկավ:

Երբ ճամփորդությունն ավարտվեց, սիրելի ընկերը բացեց նամակը: Նա այնպես ուրախացավ, որ համբուրեց ծաղիկը և բանաստեղծության հետ միասին տեղավորեց արկղի մեջ: Այնտեղ բազմաթիվ հիանալի նամակներ կային, բայց դրանք բոլորն առանց ծաղկի էին: Այստեղ նույնպես, ինչպես որ կոչել էին արևի շողերը, ծաղիկն առաջինն ու միակն էր, և հաճելի էր այդ մասին մտածելը:

Մտածելու բավական երկար ժամանակ ուներ. ամառն անցավ, անցավ նաև երկար ձմեռը, իսկ հետո, երբ կրկին ամառ եկավ, նրան դուրս բերեցին արկղից: Այս անգամ, սակայն, պատանին երջանիկ չէր: Նա կտրուկ բռնեց նամակներն ու շարտեց բանաստեղծությունն այնպես, որ ծաղիկն ընկավ հատակին:

---

<sup>1</sup> Կաթոլիկության և ուղղափառության մեջ օժման խորհուրդը: Բողոքակա- նության մեջ՝ հանդիսավոր հրապարակային ակտ, որով 14-16 տարեկան- ներին հաղորդակից են դարձնում եկեղեցական համայնքին:

Ճիշտ է, ծաղիկը տափակել ու չորացել էր, սակայն դա չէր կարող պատճառ լինել նրան հատակին շարտելու համար, թեպետ ավելի լավ էր պառկել հատակին, քան կրակի մեջ, ուր այրվում էին բանաստեղծություններն ու նամակները: Եվ ինչ էր պատահել: Պատահել էր այն, ինչը հաճախ է պատահում: Ձնծաղիկը սպրդել էր նրանից՝ դա կատակ էր, իսկ աղջիկը խաբել էր նրան՝ դա արդեն կատակ չէր: Այդ ամռանը նա իր համար սրտակից ուրիշ ընկեր էր ընտրել:

Առավոտյան արևը լուսավորեց փոքրիկ տափակած ձնծաղիկը, որն այնպիսի տեսք ուներ, կարծես իրեն նկարել էին հատակի վրա: Հատակը մաքրող աղջիկը բարձրացրեց նրան ու դրեց սեղանին դրված գրքերից մեկի մեջ. կարծում էր, թե

ծաղիկն անզգուշորեն  
զգել է հատակին,  
երբ կարգի



էր բերում սեղանը: Եվ ահա, ծաղիկը նորից հայտնվեց բանաստեղծությունների արանքում, բայց այս անգամ արդեն տպագրված բանաստեղծությունների, իսկ դրանք ավելի վաղելու էին գոնե այն պատճառով, որ ավելի թանկ արժեին:

Տարիներ անցան, և գիրքն այդպես մնաց դարակում: Բայց ահա, վերջապես, այն վերցրին, բացեցին ու կարդացին: Դա լավ գիրք էր՝ դանիացի բանաստեղծ Աբրոսիոս Ստաբի<sup>1</sup> երգերն ու պոեմներն էին. արժեր դրանց ծանոթանալ: Մարդը, որը կարդաց գիրքը, շրջեց էջը:

- Օ՛հ, ծաղիկ: Ձնծաղիկ է: Այն հաստատ հենց այնպես չի դրված այստեղ: Խեղճ Աբրոսիոս Ստաբ: Նա նույնպես ձնծաղիկ էր, ձնծաղիկ-բանաստեղծ: Նա շատ շուտ հայտնվեց, առաջ անցավ իր ժամանակից, հետևաբար ստիպված էր դիմակայել պաղ քամիներին և թաց ձյանը, երբ անցնում էր Ֆյունի<sup>2</sup> ջենթլմենների միջով: Նա կարծես ջրով լի բաժակի կամ սիրային բացիկի մեջ դրված ծաղիկ էր: Այո, նա նույնպես ամառը սխալմամբ ավետող ձնծաղիկ էր, թյուրիմացություն էր, կատակ, բայց, միևնույն է, նա առաջին, պատանեկան թարմությամբ շնչող միակ դանիացի բանաստեղծն էր: Մնա՛ այստեղ, ձնծաղիկ: Դու հենց այնպես չես այստեղ դրված:

Իսկ հետո ձնծաղիկը կրկին դրեցին գրքի մեջ. ձնծաղիկը գոհ ու երջանիկ էր՝ իմանալով, որ զուր չի դրված բանաստեղծությունների այդ հիանալի ժողովածուի մեջ, և որ այն գրողը նույնպես եղել է ձնծաղիկ, որին կատակով ծաղրել էր ձմեռը: Ձնծաղիկն ամեն ինչ յուրովի հասկացավ, ինչպես և մենք ենք ամեն ինչ յուրովի հասկանում:

Ահա և ձնծաղիկի մասին հեքիաթը:

<sup>1</sup> Ամբրոսիոս Քրիստոֆերսեն Ստաբ, 1705-1758, դանիացի բանաստեղծ, որն աղքատ ուսուցիչ էր:

<sup>2</sup> Ֆյուն-կղզի Դանիայում, որն իր մեծությամբ երրորդն է Զելանդիայից հետո:



**Կ**ար-չկար մի գեղեցիկ ու սիրունատես աղջնակ, բայց նա այնքան աղքատ էր, որ ամռանը ստիպված ոտաբոբիկ էր շրջում, իսկ ձմռանը՝ կոպիտ փայտյա մաշիկներով, որոնք սարսափելի կարմրացնում և ցավեցնում էին նրա ոտքերը:

Գյուղի հենց կենտրոնում էր ապրում ծեր կոշկակարուհին, որը մաշված կարմիր կտորներ վերցրեց ու, ինչպես կարող էր, մի զույգ մաշիկ կարեց: Մաշիկները փոքր-ինչ տգեղ էին ստացվել, բայց կարված էին բարի մտադրությամբ, և կոշկակարուհին այն նվիրեց աղջնակին:

Աղջկա անունը Կարեն էր:

Նա իր մաշիկներն առաջին անգամ հագավ հենց այն օրը, երբ հուղարկավորում էին իր մայրիկին: Չասենք, թե դրանք համապատասխանում էին սգո արարողությանը, բայց, դե, ուրիշ կոշիկ չունեի աղջնակը: Նա մաշիկները հագավ հենց մերկ ոտքերին ու գնաց աղքատիկ ծղոտե դագաղի հետևից:

Այդ ժամանակ գյուղով մեծ ու հին կառք էր անցնում, որում նստած էր մի ծեր երևելի օրիորդ: Նա տեսավ աղջկան, խղճաց նրան ու ասաց հոգևորականին.

- Լսեք, տվեք ինձ աղջկան, և ես հոգ կտանեմ նրա մասին:

Կարենը մտածեց, թե այդ ամենը պատահեց շնորհիվ իր կարմիր մաշիկների, բայց ծեր օրիորդը դրանք ահավոր համարեց և կարգադրեց այրել: Կարենի զգեստները փոխեցին և սկսեցին կարդալ ու գործել սովորեցնել: Բոլորն ասում էին, որ նա շատ սիրունիկ է, բայց նրա հայելին պնդում էր. «Դու ավելի՛ն ես, դու հիասքանչ ես»:

Մի անգամ թագուհին իր արքայադստեր հետ ճամփորդում էր երկրով մեկ, և Կարենը ժողովրդի հետ գնաց դրյակի մոտ՝ նրանց տեսելու: Սպիտակազգեստ արքայադուստրը պատշգամբ էր դուրս եկել, որ ժողովուրդը կարողանար տեսնել իրեն: Նա ոչ երկայնափեշ հագուստ էր կրում, ոչ էլ գլխին ոսկեզօծ թագ էր դրված, բայց ոտքերին այծի կաշվից հիանալի կարմիր կոշիկներ էին, որոնք չէիր համեմատի կոշկակարուհու՝ Կարենի համար կարածի հետ: Աշխարհում այդ կարմիր մաշիկներից լավ բան չէր կարող լինել:

Երբ Կարենն այն տարիքին էր հասել, որ պետք է կոնֆիրմացվեր, նրա համար նոր հագուստներ կարեցին ու պատրաստվում էին նոր մաշիկներ գնել: Քաղաքի լավագույն կոշկակարը չափեց նրա փոքր ոտքերը: Կարենն ու ծեր տիրուհին նստած էին նրա արհեստանոցում, ուր ապակիներով պահարանը լի էր հիանալի կոշիկներով ու փայլուն, լաքապատ ճոքակոշիկներով: Հիանալ կարելի էր դրանցով, բայց ծեր տիրուհին հաճույք չստացավ, նա շատ վատ էր տեսնում: Կոշիկների մեջ կար կարմիր կաշվից մի զույգ, որոնք ճիշտ և ճիշտ նման էին արքայադստեր կոշիկներին: Ինչ հիանալի

էին: Կոշկակարն ասաց, որ դրանք պատվիրված են եղել մի կոմսի աղջկա համար, միայն թե նրա հագին փոքր են եղել:

- Լաքապատ կաշի է, չէ՞, դրանք փայլում են,- հարցրեց ծեր օրիորդը:

- Այո, փայլում են,- պատասխանեց Կարենը, ապա փորձեց մաշիկները, որոնք ճիշտ և ճիշտ նրա ոտքերի չափով էին, ու գնեցին դրանք: Բայց ծեր տիրուհին չգիտեր, որ դրանք կարմիր են, հակառակ դեպքում նա Կարենին երբեք թույլ չէր տա կարմիր մաշիկներով գնալ կոնֆիրմացվելու, իսկ Կարենը հենց այդպես էլ վարվեց:

Եկեղեցում բոլորը նրա ոտքերին էին նայում: Երբ Կարենը միջանցքով մոտենում էր խորանին, նրան թվաց, թե անգամ օսլայած օձիքներով, երկար ու սև զգեստներով մահացած տղամարդ ու կին հոգևորականները դիմանկարների միջից հայացքները հառել էին իր կարմիր մաշիկներին: Նա այլ բանի մասին չէր էլ կարողանում մտածել, երբ հոգևորականը ձեռքը դրեց նրա գլխին և սկսեց խոսել Սուրբ մկրտության, Աստծո հետ ուխտի և այն մասին, որ նա արդեն հասուն քրիստոնյա է: Երգեհոնի տոնական ելևէջները ծեր խմբավարի ուղեկցությամբ երեխաների քաղցրահնչուն երգեցողությունը լցրել էին եկեղեցին, բայց Կարենը միայն իր կարմիր մաշիկների մասին էր մտածում:

Ճաշից հետո ծեր տիրուհին ուրիշներից իմացավ կարմիր մաշիկների մասին և Կարենին բացատրեց, որ վայելուչ չէ այդպես եկեղեցի գնալը, հորդորեց, որ հետագայում պետք է եկեղեցի գնալիս սև կոշիկներ հագնել, եթե անգամ դրանք հին լինեն:

Հաջորդ կիրակի պետք էր գնալ հաղորդություն ստանալու: Կարենը հայացք նետեց մեկ սև, մեկ էլ կարմիր կոշիկների

վրա և հազավ հենց կարմիրները:

Հիանալի արևոտ եղանակ էր, Կարենը ծեր տիրուհու հետ դաշտի փոշոտ արահետով անցավ:

Եկեղեցու դռների մոտ, անթացուպին հենված, երկարամո-  
րուս մի ծեր տարօրինակ զինվոր էր կանգնել: Մորուքն ավելի  
շուտ շիկակարմիր էր, քան թե սպիտակ: Նա գրեթե մինչև  
գետին խոնարիվեց նրանց առջև և ծեր օրիորդին խնդրեց,  
որ թույլ տա նրա կոշիկների վրայից փոշին մաքրել: Կարենը  
ևս իր փոքրիկ ոտքը մեկնեց նրան:

- Հապա մի տեսեք, ինչ հիանալի պարային կոշիկներ են,  
երբեք չդադարես պարելուց,- ասաց զինվորն ու ձեռքով խփեց  
կոշիկի տակացուին:

Ծեր օրիորդը մեկ սկիլինգ<sup>1</sup> տվեց զինվորին ու Կարենի  
հետ մտավ եկեղեցի:

Եկեղեցում նորից բոլորը, դիմանկարները նույնպես, նայում  
էին նրա կարմիր մաշիկներին: Կարենը ծնրադրեց խորանի  
դիմաց, և ոսկե սկիհը մոտեցրին նրա շուրթերին: Բայց նա  
միայն իր կարմիր մաշիկների մասին էր մտածում, դրանք  
կարծես իր առջևում՝ հենց սկիհի մեջ լողում էին:

Կարենը մոռացավ սաղմոս երգել ու «Հայր մեր»-ն ասել:

Մարդիկ սկսեցին եկեղեցուց դուրս գալ, իսկ ծեր օրիորդը  
նստեց կառքը: Կարենը նույնպես ոտքը դրեց ոտնակին, որ  
բարձրանա, երբ անսպասելիորեն նրա մոտ հայտնվեց ծեր  
զինվորն ու ասաց.

- Ինչ հիանալի պարային կոշիկներ են:

Կարենը չկարողացավ զսպել ինքն իրեն և մի քանի պա-  
րային շարժում արեց, որից հետո նրա ոտքերն իրենք իրենց

---

<sup>1</sup> Սկիլինգը եղել է դանիական պատմական դրամական միավորը և օգտագործ-  
վել է 1626-1874 թթ., անգլիական շիլլինգի սկանդինավյան տարբերակն էր:







շարունակեցին այնպես պարել, կարծես մաշիկներն ինչ-որ իշխանություն ունեին նրա վրա: Կարենը եկեղեցու շուրջքուլորը պարելով անցավ ու հեռացավ, բայց չէր կարողանում կանգ առնել, և կառապանը ստիպված վազեց նրա հետևից, հասավ, գրկեց ու նստեցրեց կառքը: Կարենը նստեց, բայց նրա ոտքերը շարունակում էին պարել այնպես, որ նա բարի ծեր տիրուհուն ուժեղ աքացի տվեց: Մաշիկները ստիպված հանեցին, ու ոտները հանգստացան:

Եկան տուն, և Կարենը մաշիկները դրեց պահարանի մեջ, սակայն չէր կարողանում չհիանալ դրանցով:

Ծեր տիրուհին հիվանդացավ, և ասում էին, որ երկար չի ապրի: Նրան հետևող էր պետք, և ով, եթե ոչ Կարենը պետք է խնամեր նրան: Բայց քաղաքում մեծ պարահանդես էր կազմակերպվել, որին հրավիրվել էր նաև Կարենը: Նա նայեց մահամերձ ծեր տիրուհուն, ապա՝ կարմիր մաշիկներին. միթե մեղք է նայելը: Ապա հագավ դրանք՝ դա էլ մեղք չհամարելով, իսկ հետո գնաց պարահանդես ու սկսեց պարել:

Երբ ուզում էր աջ թեքվել, կոշիկները նրան ձախ էին թեքում, ուզեց պտտվել դահլիճում, ոտքերը նրան տարան դահլիճից դուրս, աստիճաններով փողոց իջեցրին, իսկ հետո՝ քաղաքից դուրս: Այդպես պարելով նա հասավ մութ անտառին:

Հանկարծ ծառերի արանքում ինչ-որ լույս երևաց: Կարենը մտածեց, թե լուսինն է, որովհետև դեմքի էր նման, բայց դա շիկամորուս ծեր զինվորի դեմքն էր, որը գլխով արեց ու ասաց.

- Ինչ հիանալի պարային կոշիկներ են:

Նա վախեցավ և ցանկացավ դեն նետել մաշիկները, բայց դրանք շատ պինդ կպել էին ոտքերին: Գուլպաները փրթիկփրթիկ եղան, իսկ մաշիկները կարծես ձուլվել էին նրա ոտքերին, և Կարենը ստիպված էր անդադար պարել ու անցնել

դաշտերով ու մարգագետիններով, անձրևին ու արևին, գիշեր ու ցերեկ: Ամենից սարսափելին գիշերն էր:

Պարե՛ց, պարե՛ց ու հայտնվեց չցանկապատված գերեզմանատանը, բայց հանգուցյալները չէին վայելում նրա պարը, նրանք ավելի լավ բաներ ունեին անելու: Յանկացավ նստել աղքատ մեկի գերեզմանին, որի վրա դառնահամ լվաճաղիկ էր աճում, բայց այդտեղ էլ հանգիստ ու խաղաղություն չգտավ: Նա շարունակեց պարել և եկեղեցու բաց դռների մոտ երկար սպիտակ զգեստով հրեշտակ տեսավ, որի ուսերից մինչև գետին սպիտակ թևեր էին իջնում: Հրեշտակի դեմքը խիստ ու լուրջ էր, ձեռքին լայն ու փայլուն թուր էր:

- Դու պետք է պարես,- ասաց նա,- պետք է կարմիր մաշիկները հագիդ այնքան պարես, մինչև գունատվես ու սառչես, մինչև կաշիդ ու ոսկորդ կմնան: Դու պետք է պարելով անցնես դռնեդուռ, թակես այն տների դռները, որտեղ ապրում են հպարտ ու փառամոլ երեխաները: Քո թակոցը կվախեցնի նրանց: Դու պետք է անդադար պարես:

- Ողորմիր ինձ,- բացականչեց Կարենը:

Բայց չլսեց հրեշտակի պատասխանը, քանի որ մաշիկները նրան գերեզմանից դուրս տարան, ճամփաներով ու արահետներով նրան տարան դաշտ: Նա շարունակում էր պարել ու չէր կարողանում դադար առնել:

Մի անգամ առավոտյան նա պարելով անցավ ծանոթ դռան մոտով, որից՝ սաղմոսերգելով, ծաղիկներով զարդարված դագաղ էին դուրս բերում: Նա իմացավ, որ ծեր տիրուհին մահացել է, և նրան թվաց, որ լքված է բոլորի կողմից, որ Աստծո հրեշտակը անիծել է իրեն:

Նա շարունակ ապրում էր, պարում էր անգամ մթին գիշերով: Մաշիկները նրան տանում էին քարերի, թփերի ու մացա-

ռուսների միջով, որոնց փշերը արյունոտեցին Կարենի ոտքերը: Այդպես պարելով նա հասավ բաց դաշտում գտնվող մի մենավոր տնակի: Նա գիտեր, որ այդտեղ դահիճ է ապրում, մատով թկթկացրեց պատուհանի ապակուն և ասաց.

- Դուրս արի, դուրս արի, ինքս չեմ կարող ներս մտնել, ես ապրում եմ:

Եվ դահիճը պատասխանեց.

- Կարծես չգիտես, թե ով եմ ես: Ես վատ մարդկանց գլուխներն եմ թոցնում: Ես հիմա զգում եմ, թե ինչպես է իմ կացինը դողում:

- Մի կտրիր իմ գլուխը,- ասաց Կարենը,- ես չեմ կարողանա ապաշխարել: Ավելի լավ է՝ կարմիր մաշիկներով ոտքերս կտրիր:

Նա խոստովանեց իր մեղքը, իսկ դահիճը կտրեց կարմիր մաշիկներով նրա ոտքերը. պարող ոտքերն անցան դաշտով և թաքնվեցին անտառի խորքում:

Հետո դահիճը նրա համար փայտից ոտքեր ու հենակներ պատրաստեց, սովորեցրեց սաղմոս, որը երգում են մեղսավորները: Կարենը համբուրեց կացին բռնող ձեռքն ու ամայի դաշտով ճամփա ընկավ:

- Բավ է, ես շատ տանջվեցի կարմիր մաշիկների պատճառով,- ասաց նա,- հիմա եկեղեցի կգնամ, թող մարդիկ տեսնեն ինձ:

Եվ արագ շարժվեց դեպի եկեղեցու դռները: Բայց երբ արդեն հասավ այնտեղ, անսպասելիորեն նրա առաջ պարելով հայտնվեցին իր կարմիր մաշիկներով ոտքերը: Նա վախեցավ ու շրջվեց հեռացավ:

Մի ամբողջ շաբաթ Կարենը տխուր էր և աղի արտասուք էր թափում, իսկ երբ կիրակին եկավ, նա ասաց.

- Բավ է, որ տանջվեմ ու չարչարվեմ: Ինչո՞վ եմ վատ նրանցից, ովքեր նստում և մեծամտանում են եկեղեցում:


Եվ նա համարձակորեն ճանապարհ ընկավ, բայց ընդամենը եկեղեցու ցանկապատին հասավ. այնտեղ նրա դիմաց կրկին պարելով եկան կարմիր մաշիկները: Նա նորից վախեցավ, շրջվեց գնաց ու ամբողջ սրտով խոստովանեց իր մեղքը:

Հետո նա գնաց հոգևորականի տուն և նրան խնդրեց, որ իրեն ծառայության վերցնի՝ խոստանալով լինել ջանասեր և առանց վարձքի անել այն ամենը, ինչ կարող է, միայն թե գլխին ծածկ ունենա և բարի մարդկանց հետ լինի: Հոգևորականի կինը խղճաց նրան և իր տուն տարավ: Կարենն առանց դադարի աշխատում էր, բայց լուռ ու մտախոհ էր, երեկոներն ուշադիր լսում էր հոգևորականին, որն Աստվածաշունչ էր բարձրաձայն կարդում: Երեխաները շատ սիրեցին նրան, բայց երբ աղջիկները նրա մոտ խոսում էին զգեստներից և ասում էին, որ ուզում են թագուհու պես լինել, Կարենը տխուր օրորում էր գլուխը:

Հաջորդ կիրակի բոլորը պատրաստվում էին եկեղեցի գնալու և հարցրին նրան՝ արդյո՞ք ինքն էլ կգա իրենց հետ: Կարենը նայեց իր հենակներին և, արցունքն աչքերին, տխուր օրորեց գլուխը: Բոլորը գնացին լսելու Աստծո խոսքը, իսկ նա գնաց իր խուցը, ուր միայն մահճակալ ու աթոռ էր տեղավորվում: Նա նստեց ու սկսեց սաղմոս կարդալ: Հանկարծ նրա ականջին հասան եկեղեցու երգեհոնի ձայները. նա բարձրացրեց իր արցունքոտված դեմքն ու բացականջեց.

- Օգնիր ինձ, Տեր:

Անսպասելիորեն շուրջբոլորն արևի պես փայլեց, ու նրա դիմաց հայտնվեց նույն սպիտակազգեստ հրեշտակը, որին տեսել էր եկեղեցու դռների մոտ այն սարսափելի գիշերը:



Բայց հիմա թրի փոխարեն հրեշտակի ձեռքին վարդերով ծածկված հրաշալի կանաչ ճյուղ էր: Հրեշտակն այդ ճյուղը հպեց առաստաղին, և առաստաղը շատ վեր բարձրացավ, իսկ հպված տեղում մի ոսկե աստղ փայլեց: Հետո հրեշտակը հպվեց պատերին, որոնք հեռացան, և Կարենը տեսավ եկեղեցու երգեհոնը, կին և տղամարդ հոգևորականների հին դիմանկարները և եկեղեցում գտնվող բոլոր մարդկանց, որոնք նստել էին իրենց աթոռներին և սաղմոսերգում էին: Ինչ էր դա, խեղճ աղջկա խուցը վերափոխվեց եկեղեցու, թե՛ աղջիկն ինչ-որ հրաշքով տեղափոխվեց եկեղեցի... Կարենը նստել էր իր աթոռին՝ հոգևորականի ընտանիքի անդամների կողքին, և երբ նրանք ավարտեցին սաղմոսը և տեսան Կարենին, բարեհամբույր ողջունեցին նրան ու ասացին.

- Լավ արեցիր, որ եկար այստեղ, Կարեն:
- Աստծո ողորմությամբ,- պատասխանեց նա:

Երգեհոնի հանդիսավոր մեղեդին ձուլվում էր երգչախմբի մանկական ձայներին, պայծառ արևի շողերը պատուհանով թափանցում և ընկնում էին ուղիղ Կարենի դեմքին: Նրա սիրտն այնպես լցվեց այդ լույսով, խաղաղությամբ և ուրախությամբ, որ պայթեց: Նրա հոգին արևի այդ շողերի հետ ճանապարհ ընկավ Աստծո մոտ, և այնտեղ ոչ ոք կարմիր մաշիկների մասին նրան հարցեր չէր տալիս:





**Կ**ար-չկար մի հզոր թագուհի, որի այգում աճում էին տարվա բոլոր եղանակների ծաղիկները՝ բերված աշխարհի բոլոր երկրներից, բայց ամենից շատ նա վարդ էր սիրում, այդ պատճառով էլ վարդի բոլոր հնարավոր տեսակներն ուներ՝ սկսած խնձորաբույր կանաչ տերևներով մասուրից մինչև Պրովանսի՝ հիասքանչ վարդերը: Դրանք աճում էին ամրոցի պատերի երկայնքով՝ ոլորապտույտ տարածվելով սյուների ու պատուհանագոգերի վրա, միջանցքներով հասնում էին բոլոր սրահների առաստաղներին. բույրերի, ձևի և գույների ինչ բազմազանություն էր:

Բայց դրյակում տխրություն ու վիշտ էր տիրում: Թագուհին պակաս էր իր հանգստարանում. բժիշկները հայտարարեցին, որ նա մահամերձ է:

- Ընդամենը մեկ միջոց կա նրան փրկելու,- ասաց ամենաիմաստուն բժիշկը,- պետք է բերել աշխարհի ամենագեղեցիկ


<sup>1</sup> Պատմական մարզ և քաղաք Ֆրանսիայի հարավում:

վարդը, որն ամենավեհ ու ամենաանաղարտ սիրո խորհրդանիշն է: Թագուհին չի մահանա, եթե տեսնի այդ վարդը աչքերը հավիտյան փակելուց առաջ:

Եվ ահա, երիտասարդներն ու ծերերը երկրի բոլոր ծեփերից թագուհուն էին բերում իրենց այգիների ամենագեղեցիկ վարդերը, բայց չկար այն մեկը, որը պետք էր: Այդ վարդն աճում էր Սիրո պարտեզում, բայց թե ի՞ր մեկն էր, որ խորհրդանշում էր բարձրագույն, մաքրամաքուր սերը, ոչ ոք չգիտեր...



Եվ պոետները տողեր էին ձուներում աշխարհի ամենագեղեցիկ վարդին, բայց յուրաքանչյուրը





գովաբանում էր իր ունեցածը:

Այդժամ կոչ հնչեցրին երկրով մեկ, դիմեցին ամեն տարիքի ու բոլոր խավի մարդկանց, բոլոր նրանց, ում սրտում սերն էր բաբախում:

- Դեռ ոչ ոք չի ասել, թե որն է այդ ծաղիկը,- ասաց իմաստունը,- ոչ ոք մատնացույց չի արել այն վայրը, որտեղ այն ծաղկում է իր ողջ գեղեցկությամբ: Դա Ռոմեոյի և Ջուլիետի դագաղից կամ Վալբորգի<sup>1</sup> գերեզմանին աճող վարդերը չեն, թեպետ այդ վարդերը միշտ բուրելու են լեգենդներում և երգերում, դա այն վարդը չէ, որ աճում է Վինքելրիդի<sup>2</sup> արյունոտ նիզակներից, սրբազան արյունից, որ հոսում է հերոսի կրծքից, երբ նա մեռնում է հանուն հայրենիքի, թեպետ չկա ավելի քաղցր մահ, քան հայրենիքի համար զոհվելը. ոչ մի վարդ ավելի կարմիր չէ, քան հայրենիքի համար հեղաժարյունը: Դա ոչ էլ գիտության կախարդական ծաղիկն է, որի մասին հոգ տանելու, այն գտնելու համար մարդիկ նվիրում են իրենց երիտասարդ տարիները՝ անցկացնելով բազում անքուն օրեր ու գիշերներ:

- Ես գիտեմ՝ որտեղ է ծաղկում այդ վարդը,- ասած մի երջանիկ մայր, որը երեխան գրկում հայտնվել էր թագուհու ննջարանում:- Ես գիտեմ, թե որտեղ պետք է փնտրել աշխարհի ամենագեղեցիկ վարդը՝ ամենավեհ, ամենաանեղծ սիրո խորհրդանիշը: Այն ծաղկում է իմ սիրելի փոքրիկի վարդագույն այտերին, երբ նա թարմացնող քնից հետո բացում է իր աչքերն ու սերը սրտում ժպտում է ինձ:

- Գեղեցիկ է այդ վարդը, սակայն կա ավելի գեղեցիկը,- ասաց իմաստունը:

<sup>1</sup> Դանիացի գրող Ադամ Էլենշլեգերի «Ակսել և Վալբորգ» ողբերգության հերոսուհի:

<sup>2</sup> Շվեյցարիայի ազգային հերոս:

- Այո, առավել գեղեցիկը կա,- ասաց կանանցից մեկը,- ես տեսել եմ այն: Աշխարհում դրանից առավել սրբազան վարդ գոյություն չունի, բայց այն չինական վարդի թերթիկների պես գունատ է: Ես տեսել եմ այն թագուհու այտերին, երբ նա հանել էր իր թագն ու քայլում էր երկար ու տանջալի գիշերով՝ գրկում օրորելով ու խնամելով իր հիվանդ երեխային, լացելով, համբուրելով նրան ու աղոթելով այնպես, ինչպես մահացու վախով համակված մայրը կաղոթեր իր թանկագին զավակի համար:

- Սուրբ և գեղեցիկ է վշտի սպիտակ վարդը, մեծ է դրա զորությունը, բայց, միևնույնն է, դա չէ պետքական վարդը:

- Ոչ, ես աշխարհի ամենագեղեցիկ վարդը Տիրոջ խորանի առջև եմ տեսել,- ասաց բարեպաշտ ծեր եպիսկոպոսը,- այն հրեշտակի պայծառ դեմքի պես փայլում էր: Երիտասարդ աղջիկները մոտենում էին հաղորդություն ստանալու և մկրտության ուխտը վերանորոգելու, և նրանց թարմ այտերին ալ կարմիր և սպիտակ վարդեր ծաղկեցին: Խորանի առջև մի պարմանուկի էր կանգնած, որն իր երիտասարդ հոգու ողջ մաքրությամբ և սիրով նայում էր Աստծուն: Հենց դա էր ամենամաքուր և բարձրագույն սիրո դրսևորումը:

- Օրհնյալ է նման սերը, բայց, միևնույնն է, ոչ ոք դեռ չնշեց, թե որն է աշխարհի ամենագեղեցիկ վարդը,- ասաց իմաստունը:

Հանկարծ մի երեխա մտավ սենյակ. թագուհու փոքրիկ որդին էր՝ արցունքն աչքերին և այտերին, ձեռքին՝ թավշյա կագմով ու արծաթե մեծ ճարմանդներով մի գիրք:

- Մայրիկ,- ասաց փոքրիկը,- լսիր, թե քիչ առաջ ինչ կարդացի:

Եվ երեխան նստեց մահճակալի մոտ ու կարդաց Նրա մա-

սին, Ով ինքնական մահացավ խաչի վրա հանուն մարդկության, հանուն նույնիսկ չծնված սերունդների փրկության:

- Չկա սեր, որ մեծ լինի այդ սիրուց:

Եվ թագուհու այտերը վարդագունեցին, նրա աչքերը կրկին լայնացան ու վճիտ դարձան, քանզի նա տեսավ՝ ինչպես է գրքի թերթերից աճում աշխարհի ամենագեղեցիկ վարդը՝ կենդանի պատկերն այն մեկի, որն աճեց Քրիստոսի՝ խաչափայտի վրա հեղած արյունից:

- Ես տեսնում եմ այն,- ասաց թագուհին,- նա, ով տեսնում է աշխարհի ամենագեղեցիկ վարդը, երբեք չի մահանա:



# Փոքրիկ Իդայի Ծաղիկները



- Ի

մ խնդր ծաղիկներն ամբողջովին թա-  
ռամել են,- ասաց փոքրիկ Իդան:- Դեռ  
երեկ երեկոյան նրանք այնքան գեղե-  
ցիկ էին, իսկ հիմա բո-  
լոր տերևները թռչնել  
են: Ինչո՞ւ է այսպես  
լինում,- հարցրեց  
բազմոցին նստած  
ուսանողին:

Նա շատ էր  
սիրում այդ ու-  
սանողին, որով-  
հետև նա կա-  
րողանում էր  
զարմանալի  
պատմություն-

ներ պատմել և թղթից կտրատել հետաքրքիր պատկերներ, սրտիկներ՝ պարուհիներով, տարբեր տեսակի ծաղիկներով և սքանչելի պալատներով, որոնց դռները կարելի էր բացել ու փակել: Շանտ ուրախ մարդ էր այդ ուսանողը:



- Ինչո՞ւ ծաղիկներն այսքան վատ տեսք ունեն այսօր,- նորից հարցրեց Իդան՝ ցույց տալով թառամող ծաղկեփունջը:

- Գիտե՞ս՝ ինչ է եղել նրանց,- պատասխանեց ուսանողը,- ծաղիկներն անցած գիշեր եղել են պարահանդեսում, ահա թե ինչու են հիմա կախել իրենց գլխիկները:

- Ծաղիկները չեն կարող պարել,- ասաց փոքրիկ Իդան:

- Պարում են,- ասաց ուսանողը:- Գիշերները, հենց մթնում է, և մենք բոլորս քնած ենք լինում, նրանք ուրախ պարում են իրար հետ: Գրեթե ամեն գիշեր նրանք հիանալի պարահանդես են ունենում:

- Իսկ երեխաները չեն կարող գնալ նրանց պարահանդեսներին:

- Ինչո՞ւ ոչ,- պատասխանեց ուսանողը,- չէ՞ որ փոքրիկ մարգարտածաղիկներն ու հովտաշուշաններն էլ են պարում:

- Իսկ որտե՞ղ են պարում ամենագեղեցիկ ծաղիկները,- հարցրեց փոքրիկ Իդան:

- Մի՞թե դու հաճախ չես եղել քաղաքից դուրս գտնվող հիանալի ծաղիկների այգում, որն այն դղյակի շուրջն է, որտեղ ամռանն ապրում է թագավորը: Հիշո՞ւմ ես կարապետին, որոնք



լողում էին քեզ մոտ՝ հացի փշրանքներ ստանալու: Հավատա հնձ, հենց այնտեղ էլ լինում են ծաղիկների իսկական պարահանդեսները:

- Ես երեկ էլ եմ այնտեղ եղել մայրիկիս հետ,- ասաց փոքրիկ Իդան,- բայց ծառերի վրա այլևս տերևներ չկային, և ամբողջ այգում ոչ մի ծաղիկ չես գտնի: Ո՞ւր են կորել նրանք, ամռանը որքան շատ էին:

- Նրանք բոլորը դղյակի ներսում են,- պատասխանեց ուսանողը:- Պետք է քեզ ասեմ, որ հենց թագավորն ու ողջ արքունիքը վերադառնում են քաղաք՝ ծաղիկներն իսկույն այգուց պալատ են վազում, և այնտեղ սկսվում է նրանց ուրախությունը: Միայն թե տեսնես... Վարդերից երկուսը՝ ամենագեղեցիկները, նստում են գահին. դրանք թագավորն ու թագուհին են: Գեղեցիկ աքլորակատարները շարքով կանգնում են նրանց երկու կողմերում և գլուխ են խոնարհում. դրանք կամեր-յունկերներն<sup>1</sup> են: Հետո գալիս են մյուս բոլոր գեղեցիկ ծաղիկները, և սկսվում է մեծ պարահանդեսը: Կապույտ մանուշակները ծովային փոքրիկ կադետներ<sup>2</sup> են, որոնց պարընկերները հակինթներն ու քրմածաղիկներն են, որոնց օրիորդ են կոչում: Կակաչները և խոշոր դեղին շուշանները հասակավոր տիկիներն են, որոնք հետևում են կարգ ու կանոնին և որ պարողները կարգին պարեն:

- Բայց մի՞թե ոչ ոք չի պատժում ծաղիկներին թագավորական պալատում պարելու համար,- հարցրեց փոքրիկ Իդան:

- Ոչ ոք չգիտի այդ մասին,- ասաց ուսանողը:- Իհարկե, պատահում է, որ գիշերները պալատի ծերունի հսկիչը բանալիների մեծ կապը ձեռքին շրջում է պալատում, բայց հենց ծաղիկները լսում են բանալիների զնգոցը, իսկույն դադարեցնում են պարը,

<sup>1</sup> Երիտասարդ պալատականներ, որոնք ծառայում էին թագավորին:

<sup>2</sup> Ռազմական միջնակարգ դպրոցի սան:

թաքնվում լուսամուտներին կախված երկար վարագույրների հետևում և միայն գլուխներն են դուրս հանում: Ծերունի հսկիչը փնթփնթում է. «Այստեղ ինչ-որ ծաղիկներ կան, հոտն առնում եմ», բայց ոչինչ չի տեսնում:

- Զվարճալի է,- ասաց փոքրիկ Իդան և ծափ տվեց:- Այսինքն, ես էլ չեմ կարող տեսնել նրանց:

- Կարո՞ղ ես,- պատասխանեց ուսանողը:- Երբ հաջորդ անգամ գնաս այնտեղ, չմոռանաս լուսամուտից ներս նայել: Ես այսօր այնտեղ տեսա մի երկար, դեղին նարգիզ, նա պառկել ու ձգվել էր բազմոցին՝ իրեն պալատական տիկին երևակայելով:

- Իսկ բուսաբանական այգու ծաղիկները կարո՞ղ են գնալ այնտեղ, այդքան երկար ճանապարհ կտրել-անցնել:

- Հավատմ, կարող են,- պատասխանեց ուսանողը,- ծաղիկներն ուզած ժամանակ թռչում են: Միթե դու չես տեսել սիրուն թիթեռներին՝ կարմիր, դեղին, սպիտակ: Նրանք շատ նման են ծաղիկների և մի ժամանակ հենց ծաղիկներ են եղել: Նրանք իրենց ցողուններից պոկվել ու թռել են վեր, օդի մեջ, փոքրիկ թևերի պես թափահարել են թերթիկները և թռել: Եվ, որովհետև իրենց լավ են պահել, դրա համար էլ թույլ են տվել, որ ցերեկն էլ թռչեն: Հիմա այլևս ստիպված չեն վերադառնալ տուն ու հանգիստ նստել իրենց ցողունների վրա: Եվ ահա նրանց պսակաթերթիկները դարձել են իսկական թևեր: Դու ինքդ էլ տեսել ես նրանց: Բայց հնարավոր է, որ բուսաբանական այգու ծաղիկները չեն եղել թագավորի պալատում և չգիտեն էլ, որ գիշերներն այնտեղ այդպիսի ուրախություն է լինում: Հիմա քեզ մի բան կասեմ, ինչից ոչ հեռու ապրող բուսաբանության պրոֆեսորը կզարմանա: Գիտես, չէ, նրան: Երբ նրա այգին գնաս, որևէ ծաղկի պատմիր դրյակում տեղի ունեցող պարահանդեսների մասին: Նա էլ մյուսներին կպատմի, և բոլորը կթռչեն-կփախչեն:

Երբ պրոֆեսորը գա այգի, այնտեղ ոչ մի ծաղիկ չի լինի, բայց գլխի չի ընկնի, թե որտեղ են դրանք:

- Բայց ծաղիկն ինչպե՞ս կպատմի մյուսներին, չէ որ նրանք չեն խոսում:

- Իսկապես, չեն խոսում,- ասաց ուսանողը,- բայց նրանք շարժումներով հասկացնում են իրար:

Չէն տեսել, թե ինչպե՞ս են գլուխներն ու իրենց կանաչ տերևները շարժում, հենց մեղմ զեփյուռ է փչում: Նրանք էլ իրար այնպես լավ են հասկանում, որ կարծես խոսում են:

- Իսկ պրոֆեսորը հասկանո՞ւմ է նրանց շարժումները,- հարցրեց Իդան:

- Անշուշտ, հասկանում է: Մի անգամ առավոտյան նա եկավ իր այգին և տեսավ, որ խոշոր երկտուն եղինջը իր տերևներով նշաններ է անում գեղեցիկ կարմիր մեխակին, որոնց միջոցով ասում էր. «Դու հիասքանչ ես, ես շատ եմ սիրում քեզ»: Բայց պրոֆեսորին դա դուր չեկավ. նա ձեռքով խփեց երկտուն եղինջի տերևներին, որոնք կարծես մատներ լինեն, և նրա ձեռքը դաղվեց, որովհետև





եղինջի տերևները ծակում են: Դրանից հետո պրոֆեսորն այլևս չհամարձակվեց ձեռք տալ եղինջին:

- Ինչ զվարճալի է,- ասաց փոքրիկ Իդան և ծիծաղեց:

- Ինչպե՞ս կարելի է երեխայի գլուխը լցնել այդպիսի հիմարություններով,- զայրացավ ձանձրալի խորհրդականը, որը ներս էր մտել և նստած էր բազմոցին: Նա տանել չէր կարողանում ուսանողին և միշտ մոթմոթում էր, երբ ուսանողը արտասովոր ու հետաքրքիր պատկերներ էր կտրատում, օրինակ՝ կախադան հանված մարդ՝ ձեռքին մի սիրտ, իբր թե՛ նրան կախել են սրտեր գողանալու համար, կամ ցախավելին հեծած վիուկ՝ ամուսնուն իր քթի ծայրին պահած: Այս ամենը բոլորովին դուր չէր գալիս խորհրդականին, և նա միշտ, ինչպես հիմա, կրկնում էր. «Մի՞թե կարելի է երեխայի գլուխը լցնել այդպիսի հիմարություններով: Անմիտ երևակայություն է»:

Բայց փոքրիկ Իդային շատ զվարճացրեց ուսանողի պատմածը ծաղիկների մասին, և ամբողջ օրը նա այդ մասին էր մտածում: Ուրեմն իր ծաղիկներն իրենց գլուխները չէին կարողանում բարձր պահել, քանի որ հոգնել էին ամբողջ գիշեր պարելուց. նրանք տկարացել են: Նա ծաղիկները տարավ իր սեղանի մոտ, որտեղ նրա բոլոր խաղալիքներն էին շարված: Սեղանի դարակը ևս լիքն էր զանազան գեղեցիկ իրերով: Մահճակալին պառկած քնած էր նրա տիկնիկ Սոֆին, բայց փոքրիկ Իդան շշնջաց նրա ականջին.

- Սոֆի,- ասաց նա,- դու պետք է վեր կենաս և այս գիշեր պառկես սեղանի արկղիկի մեջ, որովհետև իմ խեղճ ծաղիկները հիվանդ են. գուցե նրանք լավանան, եթե նրանց քո անկողնում պառկեցնեմ:

Եվ նա տիկնիկին հանեց մահճակալից: Սոֆին դժգոհ նայեց նրան, բայց ոչ մի խոսք չասաց. նա բարկացել էր, որ իրեն

հանել են մահճակալից: Իդան ծաղիկները պառկեցրեց տիկնիկի անկողնում, վերմակով ծածկեց նրանց և պատվիրեց հանգիստ պառկել՝ փոխարենը խոստանալով թեյ տալ նրանց, որից հետո նրանք վաղն առավոտյան վեր կկենան առողջացած: Հետո նա մահճակալի շուրջը վարագույրը քաշեց, որպեսզի արևը ծաղիկների աչքերին չընկնի:

Ուսանողի պատմածն ամբողջ երեկո Իդայի մտքից դուրս չէր գալիս, և երբ արդեն ինքն էր քնելու գնում, չհամբերեց, նայեց պատուհանին կախված վարագույրների հետևը, որտեղ դրված էին իր մայրիկի սքանչելի ծաղիկները՝ կակաչներն ու



հակինթները: Փոքրիկ Իդան կամացուկ շնչաց նրանց.

- Ես գիտեմ, որ այսօր դուք պարահանդես եք գնալու:

Բայց ծաղիկները ձևացրին, թե ոչինչ չհասկացան, նրանք նույնիսկ չշարժեցին տերևները: Թեպետ, միևնույն է, փոքրիկ Իդան վստահ էր, նա ամեն ինչ գիտեր:

Անկողնում պառկած՝ նա դեռ երկար ժամանակ մտածում էր և պատկերացնում, թե ինչ հիանալի կլիներ տեսնել՝ ինչպես են ծաղիկները պարում թագավորական դղյակում: «Միթե իմ ծաղիկներն էլ են եղել պարահանդեսում»: Այսպես մտածելով՝ նա քնեց: Գիշերվա կեսին նա նորից արթնացավ: Երագում տեսել էր ծաղիկներ, ուսանողին և տաղտկալի խորհրդականին, որը նախատում էր ուսանողին՝ ասելով, որ այդ ամենը հիմարություն է: Սենյակում, որտեղ պառկած էր Իդան, խոր լռություն էր տիրում, սեղանին վառվում էր գիշերալամպը, հայրիկն ու մայրիկն էլ քնած էին:

- Հետաքրքիր է, իմ ծաղիկները քնամծ են Սոֆիի անկողնում: Ո՞նց կուզենայի իմանալ,- ինքն իրեն ասաց փոքրիկ Իդան ու գլուխը բարձրացրեց բարձից, որպեսզի նայի կիսաբաց դռնից, որից այն կողմ իր խաղալիքներն ու ծաղիկներն էին: Հետո սկսեց ականջ դնել, և նրան թվաց, թե մյուս սենյակում դաշնամուր են նվագում, այնքան մեղմ ու քնքուշ, որ ինքը երբեք չի լսել:

- Հավանաբար ծաղիկներն են պարում այնտեղ,- ինքն իրեն ասաց Իդան:- Տեր Աստված, ինչպես կուզեի տեսնել:

Բայց նա համարձակություն չունեցավ անկողնուց վեր կենալ, որովհետև կարթնացներ հայրիկին ու մայրիկին:

- Ինչ լավ կլիներ, եթե ծաղիկներն այս սենյակը մտնեին,- ասաց նա: Բայց ծաղիկները չեկան, իսկ հաճելի երաժշտությունն այնքան հրաշալի էր շարունակում հնչել, որ նա չհամբե-

րեց, զգուշորեն վեր կացավ, շատ կամաց, մատների ծայրերի վրա մոտեցավ դռանը և նայեց մյուս սենյակի ներսը:

Ինչ զվարճալի ու հիանալի տեսարան էր այնտեղ:

Կողքի սենյակում գիշերալամպ չէր վառվում, բայց, միևնույն է, այնտեղ լուսավոր էր. պատուհանից ներս թափանցող լուսնի շողերն ընկել էին հատակին, և այնքան լուսավոր էր, կարծես ցերեկ լիներ: Հատակին երկու երկար շարքով կանգնել էին հակինթներն ու կակաչները: Պատուհանագոգին ոչ մի ծաղիկ չէր մնացել, ծաղկամանները դատարկվել էին, իսկ հատակին բոլոր ծաղիկները իրար հետ այնքան գեղեցիկ էին պարում. շրջան էին կազմել՝ երկար կանաչ տերևներով իրար բռնած, և պտտվում էին:

Մի խոշոր դեղին շուշան էր դաշնամուրի դիմաց. դա, երևի, հենց այն ծաղիկն էր, որ փոքրիկ Իդան տեսել էր ամռանը: Նա լավ էր հիշում, թե ինչպես էր ուսանողն ասել. «Ա՛հ, նա որքան նման է օրիորդ Լինային»: Այն ժամանակ բոլորը ծիծաղեցին ուսանողի վրա, բայց այժմ Իդային թվաց, թե, իսկապես, այդ երկար, դեղին շուշանը նման է Լինային: Եվ նա ճիշտ այնպես էր նվագում, ինչպես այդ օրիորդը. իր երկարավուն դեղին երեսը դարձնում էր մերթ մի կողմը, մերթ՝ մյուս, և գլուխը շարժում էր այդ սքանչելի երաժշտության տակտի հետ:

Ոչ ոք այդտեղ չէր նկատում փոքրիկ Իդային: Նա տեսավ, թե ինչպես խոշոր կապուտակ քրմածաղիկը ցատկեց այն սեղանի վրա, որտեղ իր խաղալիքներն էին, մոտեցավ տիկնիկի մահճակալին և վարագույրը հետ քաշեց: Այնտեղ հիվանդ ծաղիկներն էին պառկած, բայց նրանք իսկույն վեր թռան ու գլխով արին ներքևում գտնվողներին՝ հասկացնելով, որ իրենք էլ են ուզում պարել: Ծերունի ծխնելույզ մաքրող խաղալիքը, որի ներքևի շրթունքը կոտրված էր, վեր կացավ և խոնարհվեց սքանչելի

ծաղիկներին. հիմա նրանք ամենևին հիվանդի նման չէին, երբ ցատկեցին հատակին՝ միացան մնացածին և սկսեցին բոլորի հետ միասին լավ ժամանակ անցկացնել:

Կարծես ինչ-որ մի բան չխկոցով ընկավ հատակին: Իդան նայեց չխկոցի կողմը. դա ուռենու ճյուղ էր, որ մնացել էր Մարդի Գրայի օրերից<sup>1</sup>: Նա ևս սեղանից ցած էր ցատկել ծաղիկների մոտ՝ իրեն համարելով նրանցից մեկը: Թղթե ծաղիկներով զարդարված այդ ճիպոտը նույնպես շատ սիրունիկ էր. նրա ծայրին նստած էր մոմե մի տիկնիկ՝ գլխին լայնեզր գլխարկ, ճիշտ և ճիշտ նման խորհրդականի գլխարկին:

Ուռենու ճյուղը ոստոստում էր իր երեք կարմիր փայտե ոտիկների վրա, ամբողջ ուժով դոփում էր, որովհետև նա մազուրկա<sup>2</sup> էր պարում, իսկ մյուս ծաղիկներն այդ պարը չգիտեին, որովհետև շատ թեթև էին և այդպես դոփել չէին կարող:

Հանկարծ մոմե տիկնիկը ուռենու ճյուղի վրա մեծացավ ու ձգվեց, շրջվեց թղթե ծաղիկների կողմը ու գոռաց.

- Ո՛նց կարելի է երեխայի գլուխն այդպիսի ցնդաբանություններով լցնել: Հիմար երևակայություն է դա:

Այժմ արդեն մոմե տիկնիկը մեկը մեկին նմանվեց խորհրդականին՝ սև լայնեզր գլխարկով, դեղնավուն, հիվանդոտ դեմքով ու զայրացկոտ: Բայց թղթե ծաղիկները խփեցին նրա բարալիկ ոտքերին, և նա նորից կծկվեց ու վերածվեց փոքրիկ մոմե տիկնիկի: Այդ ամենն այնքան ծիծաղելի էր, որ փոքրիկ Իդան չկարողացավ զսպել ծիծաղը:

Ուռենու ճյուղը շարունակում էր պարել, և խորհրդականն ուզեր-չուզեր՝ նրա հետ պարում էր, կապ չունե՛ր՝ ամբողջ հասակով կծգվեր, թե կմնար լայնեզր սև գլխարկով մոմե փոքրիկ

<sup>1</sup> Բառացի՝ յուղոտ երեքշաբթի, կաթոլիկյան կառնավալի վերջին օրն է Մեծ պահքից առաջ, համապատասխանում է Բարեկենդանին:

<sup>2</sup> Լեհական ժողովրդական պար:

ու դեղին տիկնիկ:

Ի վերջո ծաղիկները, հատկապես նրանք, որ պառկել էին տիկնիկի մահճակալում, խնդրեցին ուռենու ճյուղին՝ հանգիստ թողնի նրան. և ճյուղը կատարեց նրանց խնդրանքը: Հանկարծ ուժեղ թխկոց լսվեց այն արկղից, որտեղ պառկած էին Իդայի Սոֆի տիկնիկն ու մնացած խաղալիքները: Ծխնելույզ մաքրողը վազեց սեղանի եզրով, պառկեց փորի վրա և կիսով չափ բացեց արկղը: Սոֆին վեր կացավ և զարմացած նայեց շուրջբոլորը.

- Փաստորեն պարահանդես է,- ասաց նա:- Ինչո՞ւ ինձ դրա մասին ոչ ոք չի ասել:

- Կպարե՞ս ինձ հետ,- հարցրեց Ծխնելույզ մաքրողը:

- Ինչ էլ մի զույգ ես,- ասաց Սոֆին և մեջքը դարձրեց նրան: Հետո նստեց արկղի վրա և սպասեց՝ միգուցե ծաղիկներից մեկն իրեն կհրավիրի, բայց ոչ ոք չմոտեցավ: Նա սկսեց հազալ՝ «ըհը, ըհը, ըհը», բայց այդպես էլ ոչ ոք չմոտեցավ: Ծխնելույզ մաքրողը մենակ էր պարում, և, ի դեպ, շատ լավ էր պարում:

Տեսնելով, որ ծաղիկներից ոչ մեկն իր վրա ուշադրություն չի դարձնում՝ Սոֆին այնպես արեց, որ դարակ-արկղիկի վրայից ընկնի հատակին, և այնպիսի աղմուկով ընկավ, որ բոլորը վազեցին նրա մոտ ու սկսեցին հարցուփորձ անել, թե արդյոք չի վնասվել: Բոլորը նրա հետ քնքշաբար էին խոսում, հատկապես նրանք, ովքեր քնել էին նրա մահճակալին. Սոֆին դուրս-ինչ չէր վնասվել, և Իդայի ծաղիկները սկսեցին նրան շնորհակալություն հայտնել հրաշալի անկողնու համար, հետո նրան տարան հատակի կենտրոնը, որտեղ լուսնի լույսը շրջան էր գծել և սկսեցին պարել նրա հետ, իսկ մնացած ծաղիկները պտտվում էին նրանց շուրջը: Այժմ արդեն Սոֆին երջանիկ էր և ծաղիկներին ասաց, որ հաճույքով նրանց է զիջում իր մահճակալը, և որ ինքն իրեն դարակի մեջ էլ է լավ զգում:



- Շնորհակալություն,- ասացին ծաղիկները,- բայց մենք այդ-  
քան երկար չենք կարող ապրել: Առավոտյան մենք կմահա-  
նանք: Միայն թե փոքրիկ Իդային ասա, որ մեզ պարտեզում  
թաղի, այնտեղ, որտեղ թաղված է նրա դեղձանիկը: Ամռանը  
մենք նորից կաճենք և ավելի գեղեցիկ կլինենք:

- Ո՛հ, դուք չպետք է մահանաք,- ասաց Սոֆին ու համբուրեց  
ծաղիկներին:

Այդ պահին սենյակի դուռը բացվեց, ու հյուրասենյակ մտավ  
ծաղիկների մի ամբողջ խումբ: Իդան ոչ մի կերպ չէր հաս-  
կանում, թե որտեղից հայտնվեցին նրանք. հավանաբար, թա-  
գավորական դոյակից, մտածեց նա: Առջևից գնում էին երկու  
հրաշալի վարդեր՝ գլխներին փոքրիկ ոսկե թագեր. դրանք  
թագավորն ու թագուհին էին: Նրանց հետևից, այս ու այն կողմ  
խոնարհվելով ու ողջունելով, գնում էին հրաշալի շահաբալներն  
ու մեխակները:

Երաժիշտները՝ խոշոր կակաչներն ու քաջվարդերը, սիսեռի  
պատիճ էին փչում և փչելուց ամբողջովին կարմրել էին, իսկ  
փոքրիկ կապույտ զանգակածաղիկներն ու սպիտակ ձնծաղիկ-  
ներն այնպես էին զնգզնգում, ասես նրանց վրա զանգուլակ-  
ներ էին կախված: Ինչ զարմանալի երաժշտություն էր: Հետո  
քայլում էր ուրիշ ծաղիկների մի ողջ բազմություն, և նրանք  
բոլորը պարում էին՝ և կապույտ մանուշակները, և կարմիր վա-  
ղենակները, և մարգարտածաղիկները, և հովտաշուշանները:  
Ծաղիկներն այնպես հիանալի էին պարում և համբուրվում. ինչ  
հիանալի տեսարան էր:

Վերջապես բոլորն իրար բարի գիշեր մաղթեցին, և փոքրիկ  
Իդան կամացուկ մտավ իր տեղերն ու ամբողջ գիշեր երազում  
տեսավ ծաղիկներ ու այն ամենը, ինչ տեսել էր:

Առավոտյան վեր կացավ ու շտապեց իր սեղանի մոտ՝ տես-

նելու՝ արդյոք այնտեղ են իր ծաղիկները:

Նա փոքրիկ մահճակալի վրայի ծածկոցը մի կողմ քաշեց. այո, նրանք պառկած էին անկողնում, բայց ամբողջությամբ թռչնել էին: Սոֆին նույնպես իր տեղում էր՝ պառկած էր արկղում և քնատ տեսք ուներ:

- Հիշում ես՝ ինչ պետք է ասես ինձ,- հարցրեց փոքրիկ Իդան:

Բայց Սոֆին անտարբեր հայացքով նայում էր նրան ու ոչինչ չասաց:

- Ինչ վատն ես դու,- ասաց Իդան,- իսկ նրանք պարում էին քեզ հետ:

Հետո նա վերցրեց գեղեցիկ թռչուններով նկարազարդված սովարաթղթե մի արկղիկ, բացեց այն և դրա մեջ դրեց թռչնած ծաղիկներին:

- Սա կլինի ձեր գեղեցիկ դագաղը,- ասաց նա,- իսկ երբ իմ զարմիկները Նորվեգիայից հյուր գան մեզ, ինձ կօգնեն ձեզ թաղել պարտեզում, որպեսզի հաջորդ ամռանն ավելի գեղեցիկ աճեք:

Նորվեգացի զարմիկները ժիր տղաներ էին, որոնց անունները Յոնաս և Ադոլֆ էին: Նրանց հայրը մեկական նոր արբալետ<sup>1</sup> էր նվիրել, և տղաներն իրենց հետ բերել էին արբալետները, որ ցույց տան Իդային, որն էլ պատմեց մահացած խեղճ ծաղիկների մասին և թույլ տվեց, որ իրեն օգնեն՝ թաղելու նրանց: Տղաները գնում էին առջևից՝ արբալետներն ուսերին: Նրանց հետևում էր փոքրիկ Իդան՝ մահացած ծաղիկներով արկղը ձեռքին: Պարտեզում փոս փորեցին. Իդան համբուրեց ծաղիկներին ու արկղիկն իջեցրեց փոսի մեջ, իսկ Յոնասն ու Ադոլֆը արբալետներից նետեր արձակեցին գերեզմանի վրա, քանի որ նրանք ոչ զենք ուներին, ոչ էլ թնդանոթներ:

<sup>1</sup> Ինքնաձիգ աղեղ:



**Կ**ար-չկար մի արքայազն, որն ուզում էր ամուսնանալ արքայադստեր հետ: Միայն թե արքայադուստրը պետք է իսկական լիներ, ինչի համար էլ արքայազնը շրջեց աշխարհով մեկ՝ նրան գտնելու համար, բայց ամենուր մի բան այն չէր: Արքայադուստրեր շատ կային, բայց ինչպե՞ս պարզել՝ իսկական էին, թե ոչ: Բոլորի մեջ ինչ- որ բան պակասում էր: Եվ ահա նա տուն վերադարձավ շատ վշտացած, չէ՞ որ նա իսկական արքայադուստր էր ուզում:

Մի անգամ երեկոյան եղանակը սաստիկ վատացավ: Որոտ էր ու կայծակ, և անձրևը հորդում էր երկնքից: Սարսափելի էր: Ահա այդ ժամին քաղաքի դարպասը բախեցին, և ծեր թագավորը գնաց բացելու:

Դարպասի դիմաց մի արքայադուստր էր կանգնած: Բայց, Տեր Աստված, ինչպիսի տեսք ուներ նա անձրևի ու քամու պատճառով: Զուրը մազերից հոսում էր հագուստի վրայով, լցվում կոշիկների մեջ և դուրս հոսում կրունկներից, և, այդ-

քանով հանդերձ, վստահեցնում էր, թե ինքն իսկական արքայադուստր է:

«Դա մենք շուտով կպարզենք», - մտածեց ծեր թագուհին, բայց ոչինչ չասաց, մտավ ննջարան, մահճակալի վրայից հավաքեց անկողնային պարագաները և մահճակալի տախտակի վրա մի սիսեռահատիկ դրեց, հետո այդ հատիկի վրա քսան ներքնակ դարսեց, իսկ ներքնակների վրա էլ՝ քսան փափկափետուր վերմակ:

Արքայադուստրն այդտեղ պետք է պառկեր գիշերը:



Առավոտյան նրան հարցրին, թե ինչպես է քնել:


- Օ՛հ, սոսկալի էր,- պատասխանեց արքայադուստրը,- ամբողջ գիշեր այք չեմ փակել: Աստված գիտե՛ ինչ էր այդ անկողնու մեջ: Ինչ-որ կոշտ բանի վրա էի պառկած, ամբողջ մարմինս կապտուկներով պատվեց: Ուղղակի սարսափելի էր:

Այդժամ նրանք հասկացան, որ նա իսկական արքայադուստր է, քանի որ քսան ներքնակի և քսան նրբափետուր վերմակների տակից զգացել էր սիսեռահատիկը: Այդքան նուրբ ու զգայուն մաշկ կարող էր ունենալ միայն իսկական արքայադուստրը: Ար-

քայազնը նրան կնության առավ, քանզի վստահ էր, որ նա իսկական արքայադուստր է:

Իսկ սիսեռահատիկը տարան դրեցին թանգարանում, և եթե որևէ մեկը չի գողացել, ուրեմն հիմա էլ այն կարելի է տեսնել:

Իմացած եղիր, որ սա իրական պատմություն է:







**Ժ** ամանակին քսանհինգ անագե զինվորիկներ կային: Նրանք հարազատ եղբայրներ էին, որովհետև ծնվել էին մի հին անագե գոբալից: Շատ գեղեցիկ էին նրանք՝ կարմրակապույտ համազգեստներով, ամեն մեկի ուսին՝ հրացան, հայացքները հառած ուղիղ դեպի առաջ:

- Անագե զինվորիկներ...

Այս էր առաջին խոսքը, որ նրանք լսեցին այս աշխարհում, երբ բացվեց այն տուփը, որի մեջ պահված էին: Մի փոքրիկ տղա այդպես գոչեց ու ծափ զարկեց. նրա ծննդյան օրն էր, և զինվորիկներին նվեր էր ստացել: Տղան իսկույն սկսեց սեղանի վրա շարել նրանց: Զինվորիկները բացարձակ նման էին մեկը մյուսին, միայն մեկն էր տարբերվում. նա մեկ ոտք ուներ, քանի որ վերջում էին նրան ծուլել, և երկրորդ ոտքի համար անագը չէր բավականացրել: Բայց նա էլ իր մեկ ոտքի վրա այնպես ամուր էր կանգնած, ինչպես մյուսները՝ երկու ոտքի վրա, և հենց նա էր, որ դառնալու էր նշանավոր:



Սեղանի վրա, ուր շարված էին զինվորիկները, ուրիշ շատ խաղալիքներ էլ կային, բայց ամենից շատ աչքի էր ընկնում մի հրաշալի, ստվարաթղթե դոյակ, որի փոքրիկ լուսամուտներից կարելի էր տեսնել ներսը: Դոյակի առաջ՝ փոքրիկ հայելու շուրջը, որն իրենից լիճ էր ներկայացնում, շարված էին մանրիկ ծառեր, իսկ լճի մեջ մոմե կարապներ էին լողում և արտացոլվում հայելու մեջ: Այդ ամենը հիանալի էր ու գեղեցիկ, բայց ամենից գեղեցիկն այն փոքրիկ օրիորդն էր, որ կանգնած էր դոյակի բաց դռան շեմին: Նա էլ էր ստվարաթղթից կտրած, հագին նրբագույն բատիստից շրջազգեստ էր, իսկ մի նեղլիկ կապույտ ժապավեն շարժի պես շեղակի ցած էր իջնում ուսով: Ժապավենի ուղիղ մեջտեղում ամրացված էր աղջկա դեմքի մեծության շողշողուն փայլազարդ: Փոքրիկ օրիորդը պարուհի էր. նա երկու ձեռքերը պարզել էր առաջ, իսկ մի ոտքն այնպես էր վեր բարձրացրել, որ անագե զինվորիկն այն չտեսավ և կարծեց, թե աղջիկն էլ իր նման մեկ ոտք ունի:

«Ա՛յ թե իմ կինը լիներ նա,- մտածեց անագե զինվորիկը,- միայն թե նա, երևի, ազնվական է. դոյակում է ապրում, իսկ իմ ունեցած- չունեցածը մի տուփ է և, բացի այդ, քսանհինգ հոգով խցկված ենք մի տուփի մեջ: Չէ՛, տուփը նրա տեղը չէ: Բայցևայնպես, արժե ծանոթանալ հետը»: Եվ նա պառկեց ծխախոտի տուփի հետևում, որ նույնպես դրված էր սեղանին: Այստեղից նա կարող էր անթարթ նայել գեղեցիկ փոքրիկ պարուհուն, որը շարունակում էր կանգնած մնալ մեկ ոտքի վրա՝ չկորցնելով հավասարակշռությունը:

Ուշ երեկոյան մյուս բոլոր զինվորիկներին նորից տեղավորեցին տուփի մեջ, և տանը եղած մարդիկ պառկեցին քնելու: Այդ ժամանակ խաղալիքներն իրենք սկսեցին խաղալ. սկսեցին մեկը մյուսին հյուր գնալ, պատերազմել, պարահանդես

կազմակերպել: Անագե զինվորիկները տուփի մեջ սկսեցին  
խլրտալ, որովհետև նրանք էլ էին ուզում խաղալ, բայց չէին  
կարողանում բարձրացնել տուփի խուփը: Ընկուզկոտրիչը  
գլուխկոնձի էր տալիս, իսկ քարեգրիչը պտույտներ էր գործում  
գրատախտակի վրա: Այնպիսի աղմուկ-  
աղաղակ բարձրացավ, որ  
դեղձանիկն արթնացավ  
ու սկսեց խոսել, այն էլ՝  
բանաստեղծորեն:  
Միայն երկու հո-  
գի տեղից չէին  
շարժվում՝



անագե գինվորիկն ու փոքրիկ պարուհին, որը շարունակում էր ուղիղ կանգնած մնալ մեկ ոտքի մատների ծայրերի վրա՝ ձեռքերն առաջ պարզած: Զինվորիկը նույնպես ամուր կանգնել էր իր միակ ոտքի վրա և ոչ մի բույս աչքը չէր հեռացնում նրանից:

Ժամը տասներկուսը խփեց: Եվ չրփսկոց լսվեց: Դա ծխատուփն էր, որ չրթոցով բացվեց, բայց մեջը ծխախոտի փոխարեն մի սև տրոլ էր, որը մի յուրօրինակ արվեստի գործ էր:

- Էյ, անագե գինվորիկ,- ասաց տրոլը,-  
ինչ ես աչքերդ չռել վրաս:



Անագե զինվորիկը ձևացրեց, թե նրան չի լսում:

- Դե լավ, առավոտյան կտեսնես,- ասաց տրուլը:

Առավոտյան երեխաները վեր կացան և անագե զինվորիկին դրեցին լուսամուտագոգին: Եվ ահա, տրոլը քաշեց պարանը, թե միջանցիկ քամու պատճառով, հանկարծ լուսամուտը բացվեց, ու զինվորիկը երրորդ հարկից գլխիվայր ընկավ: Ահավոր մեծ արագություն էր: Նրա սաղավարտն ու սվինը խրվեցին գլաքարերի արանքը, իսկ ինքը կանգնեց գլխի վրա՝ ոտքը դեպի վեր տնկած:


Տան սպասուհին և փոքրիկ տղան իսկույն փողոց վազեցին՝ զինվորիկին փնտրելու, բայց թեպետ քիչ էր մնում ոտքը վրան դնեին, այդպես էլ չնկատեցին նրան: Եթե զինվորիկը բացականչեր՝ «Այստեղ եմ», նրանք, հնարավոր է, կգտնեին, բայց նա անվայելուչ համարեց գոռալ, քանի որ հագին զինվորական համազգեստ էր:

Շուտով անձրև սկսվեց, որն աստիճանաբար հորդացավ՝ ասես դույլից ջուր թափվեր: Երբ անձրևը դադարեց, երկու փողոցային տղաներ եկան:

- Տես,- ասաց նրանցից մեկը,- այստեղ մի անագե զինվորիկ կա ընկած: Արի՛ սրան նավարկության ուղարկենք:

Նրանք լրագրի թղթից մի նավակ պատրաստեցին, անագե զինվորիկին դրեցին նավակի մեջ, այն իջեցրին ջրհորդանը, իսկ իրենք էլ սկսեցին վազել նավակի կողքով ու ծափ տալ: Տեր Աստված, ինչպե՞ս էին ալիքները զարկվում ջրհորդանի պատերին, ինչ ուժեղ էր ջրի հոսանքը. չմոռանանք, որ հորդ անձրև էր եկել: Թղթե նավակը վեր ու վար էր լինում, երբեմն էլ այնպիսի արագ պտույտներ էր անում, որ անագե զինվորիկը ցնցվում էր. բայց նա աննկուն էր՝ շարունակում էր անթարթ առաջ նայել՝ հրացանն ուսին պահած:





Հանկարծ նավակը հայտնվեց ջրհորդանի տախտակե երկար կամրջակի տակ: Այդտեղ այնպես մութ էր, ինչպես տուփի մեջ:

«Որտեղ եմ ես,- մտածեց նա:- Այս ամենը տրուի սարքած բաներն: Ա՛յ, եթե փոքրիկ օրհորդը կողքիս լիներ, թող թեկուզ երկու անգամ ավելի մութ լիներ, միևնույնը կլիներ ինձ համար»:

Այդ պահին կամրջակի տակից դուրս պրծավ մի մեծ ջրառնետ, որն այդտեղ էր ապրում:

- Անձնագիր ունե՞ս,- հարցրեց առնետը,- ցոյց տուր այն:

Բայց անագե զինվորիկը լուռ մնաց և ավելի ամուր սեղմեց հրացանը: Նավակը սուրաց, իսկ առնետը՝ նրա հետևից: Օ՛, ինչպես էր նա ատամները կրճտացնում և հանդիպակաց լողացող տաշեղներին ու շյուղերին ձայնում.

- Բռնե՞ք դրան, բռնե՞ք դրան: Նա մաքսատուրք չի՛ վճարել, անձնագիր ցույց չի՛ տվել:

Բայց հոսանքն ավելի ու ավելի էր ուժեղանում: Անագե զինվորիկն արդեն առջևում նշմարում էր կամրջակից դուրս բացվող լույսը: Բայց դրա հետ մեկտեղ այնպիսի զարհուրելի աղմուկ-աղաղակ էր հասնում ականջին, որ մեզնից ամենա-քաջն անգամ կվախենար: Ինքնե՛րդ մտածեք. այնտեղ, որտեղ վերջանում էր կամրջակը, ջրհորդանը ցած էր թափվում մի մեծ ջրանցքի մեջ: Նրա համար դա այնքան վտանգավոր էր, ինչ-պես մեզ համար նավակով դեպի ահագին ջրվեժ ընթանալը:

Բայց նավակն արդեն այնքան էր մոտեցել դրան, որ այլևս անհնար էր կանգ առնել: Խեղճ անագե զինվորիկը, որքան ուժ ուներ, պինդ ու ձիգ կանգնած էր, նույնիսկ աչքը չէր թարթում: Նավակը երեք թե չորս անգամ շուռ եկավ, բերնեբերան ջրով լցվեց և սկսեց սուզվել: Ջուրը հասավ անագե զինվորիկի պարանոցին, և նավակը սկսեց ավելի ու ավելի սուզվել, թուղթն աստիճանաբար սկսեց ավելի փափկել ու լուծվել ջրում: Այն է՛ ջուրը ծածկել էր զինվորիկին մինչև գլուխը, նա մտածեց փոքրիկ, գեղեցկուհի պարուհու մասին, որին այլևս չէր կարողանալու տեսնել: Եվ անագե զինվորիկի ականջներում մի շատ հին երգ հնչեց.

Հառանջ, քաջ մարտիկ, հառանջ,

Մահվանն ընթացիր ընդառաջ:

Թղթե նավակը պատռվեց և այն է՛ անագե զինվորիկը պետք է խեղդվեր, երբ նույն պահին մի մեծ ձուկ կուլ տվեց նրան:

Օ՛, ինչ մութ էր ձկան փորում: Այստեղ ավելի մութ և շատ ավելի նեղվածք էր, քան ջրհորդանի տախտակների տակ: Բայց անագե զինվորիկը, միևնույն է, տոկուն էր. հրացանն ուսին՝ նա պառկել էր ու զինվորականի պես հասակով մեկ ձգվել:

Ձուկը թրմփում- շրմփում էր և անհասկանալի կերպով թաքտում էր: Վերջապես բոլորովին հանդարտվեց, և որոշ



Ժամանակ անց կայծակի պես մի շողշողուն բան խոցեց նրան: Անազե զինվորիկը կրկին տեսավ ցերեկվա լույսն ու մի ձայն լսեց: «Անազե զինվորիկը», - գոչեց մեկը: Ձկանը բռնեցին, տարան շուկա, այնտեղից գնեցին ու բերեցին խոհանոց, որտեղ էլ խոհարարուհին իր սուր դանակով կտոր- կտոր արեց: Կինը երկու մատով բռնեց զինվորիկի գոտկատեղից ու տարավ հյուրասենյակ. բոլորն ուզում էին տեսնել այդ զարմանալի մարդուկին, որը ճամփորդել էր ձկան փորում: Բայց անազե զինվորիկը չէր պարծենում դրանով:

Նրան դրին սեղանի վրա. օ հրաշք, ինչքեր ասես չեն պատահում աշխարհում. զինվորիկը նույն սենյակում էր, որտեղ եղել էր առաջ: Նա տեսավ նույն երեխաներին, նույն խաղալիքներն էին սեղանին, և նույն հրաշալի դոյակը՝ իր չքնաղ պարուհիով: Վերջինս էլի նույն կերպ կանգնած էր մեկ ոտքի վրա, մյուսը՝ վեր բարձրացրած. նա ևս տոկուն էր: Այս ամենից անազե զինվորիկն այնպես հուզվեց, որ քիչ մնաց լաց լինի անազե արցունքներով, միայն թե զինվորները երբեք չեն լացում: Զինվորիկը նայեց աղջկան, աղջիկը՝ նրան: Եվ ոչ մեկը ոչինչ չասաց:

Հանկարծ տղաներից մեկը, չգիտես ինչու, ճանկեց անազե զինվորիկին և նետեց հախճասալիկե վառարանի մեջ: Հավանաբար՝ ծխատուփի մեջ նստած տրոլն էր նրան այդ քայլին դրդել:

Ահա անազե զինվորիկը կանգնած էր բոցերով պատված: Սարսափելի շոգ էր, բայց ինքն էլ չգիտեր, թե ինչից՝ կրակից, թե սիրուց: Նրա վրայի գեղեցիկ ներկերը հոսեցին, նա բոլորովին գունազրկվեց. վշտից էր դա, թե՛ ճամփորդության ժամանակ էր այդպես եղել. ոչ ոք չգիտեր: Նա նայում էր աղջկան, աղջիկը՝ նրան, և զգում էր, որ հալվում է, բայց դեռ

կանգնած էր ուղիղ, ամուր և հրացանն ուսին: Հանկարծ սենյակի դուռը լայն բացվեց, քամին պարուհուն տեղից պոկեց, և նա, սիլֆիդայի<sup>1</sup> պես ճախրելով, ընկավ վառարանի մեջ՝ ուղիղ անագե գինվորիկի մոտ, անմիջապես բռնկվեց կրակով և անէացավ, իսկ անագե գինվորիկը հալվելով վերածվեց փոքրիկ գնդիկի:

Հաջորդ օրը, երբ սպասուհին վառարանի մոխիրն էր հավաքում, մի անագե սրտիկ գտավ, իսկ գեղեցիկ պարուհուց մնացել էր միայն փայլազարդը, որն էլ այրվել ու ածխի պես սևացել էր:



<sup>1</sup> Օդի ոգի միջնադարյան եվրոպայում:



**Ի** հարկե, դուք գիտեք, թե ինչ է մանրադիտակը: Այն շրջանաձև խոշորացնող ապակի է, որի շնորհիվ ամեն ինչ հարյուր անգամ մեծ է թվում, քան իրականում կա: Եթե այն մոտեցնեք աչքին և նայեք ջրափոսի ջրի կաթիլին, հազարավոր տարօրինակ արարածներ կտեսնեք, որոնք երբեք չեն երևում ջրի մեջ, բայց ապրում են այնտեղ: Նրանք իրապես գոյություն ունեն: Նայում ես ջրի կաթիլին, իսկ քո առջև ոչ ավելի, ոչ պակաս, ավստ է՝ լի ծովախեցգետիններով, որոնք թռչկոտում են, հրմշտում իրար և այնքան վայրագ ու անկուշտ են, որ իրար ոտք են կծոտելով պոկում՝ մեկ առջևի ոտքը, մեկ՝ հետևի: Բայց, այդքանով հանդերձ, նրանք յուրովի ուրախ ու երջանիկ են:

Կար-չկար մի ծերուկ, ում բոլորը կոչում էին Կրիբլե-Կրաբլե<sup>1</sup>. դե հիման, այդպիսի անուն ուներ: Նա մշտապես ուզում էր ամեն ինչ լավ անել, և երբ ոչինչ չէր հաջողվում, դիմում էր հմայութ-

<sup>1</sup> Կրիբլե-Կրաբլեն այստեղ օգտագործվում է որպես անուն, բայց Անդերսենի մյուս հեքիաթներում այն օգտագործվում է որպես կախարդանքի խոսք:

յան օգնությանը:

Եվ, ահա, մի անգամ նստել ու մանրադիտակով նայում էր հենց ջրափոսից վերցրած ջրի կաթիլին. այդ ինչ եռուզեռ ու իրարանցում էր: Հազարավոր փոքր կենդանիներ թռչկոտում էին, կծմծում, քաշքշում և ուտում էին իրար:

- Նողկալի է,- բացականչեց ծեր Կրիբլե-Կրաբլեն,- միթե հնարավոր չէ ինչ-որ կերպ նրանց հաշտեցնել, կարգ ու կանոն հաստատել, որ ամեն մեկն իր տեղն ու իրավունքներն իմանա:

Ծերուկը մտածեց, մտածեց, բայց որևէ ելք չկարողացավ գտնել ու ստիպված դիմեց հմայության միջոցին:

- Գոնե պետք է նրանց ներկել, որպեսզի ավելի լավ երևան,- ասաց նա ու վրաները կարմիր գինու նման ինչ-որ հեղուկ կաթեցրեց. դա գինի չէր, այլ վիուկի բարձրակարգ, երկու սկիլլինգ արժեցող արյուն: Բոլոր վայրի գազանիկները կարմրագույն դարձան, իսկ ջրի կաթիլն այժմ ուներ քաղաքի տեսք, որը լի էր մերկ վայրենի մարդկանցով:

- Այդ ինչ է,- ծերուկին հարցրեց մի ուրիշ հրաշագործ, որն անուն չունեի և հենց դրանով էլ հայտնի էր:

- Դե՛, գուշակիր,- պատասխանեց Կրիբլե- Կրաբլեն,- եթե գուշակես, ես այն կնվիրեմ քեզ: Բայց դե հեշտ չէ գուշակել, երբ չգիտես՝ ինչի մասին է խոսքը:

Անանուն հրաշագործը նայեց մանրադիտակով: Իրավամբ, նրա առջև բացված տեսարանը քաղաք էր հիշեցնում, ուր բոլոր մարդիկ մերկ վազում էին: Ահավոր էր: Իսկ ավելի սարսափելին այն էր, որ նրանք հրմշտում, կծոտում ու քաշքշում, պատառ-պատառ էին անում իրար: Ով ներքևում էր՝ ամեն կերպ ուզում էր հասնել վերև, իսկ ով վերևում էր՝ ցած էին գցում:

- Տես, տես, նրա ոտքն իմից երկար է, կորի՛ր այստեղից: Իսկ այս մեկի ականջի հետևում փոքրիկ ուռուցք կա, մի շնտ փոքր, անվնաս ուռուցք, բայց դրանից նա տանջվում է և ուրեմն թող ավելի շատ տանջվի:

Եվ նրանք այդ խեղճին կծեցին, մասնատեցին և կերան, և



ընդամենը մի փոքր ուռուցքի պատճառով:

Մեկը նստած էր առանձին ու լուռ, ասես անմեղ աղջիկ լիներ, որ խաղաղություն ու հանգստություն էր ուզում: Բայց մնացածը չհանդուրժեցին դա, բռնեցին-քաշեցին նրան, ծեծեցին, կտրատեցին ու կերան:

- Չափազանց զվարճալի է,- ասաց անանուն հրաշագործը:

- Եվ, քո կարծիքով, ինչ է դա, կարող ես գուշակել,- հարցրեց Կրիբլե-Կրաբլեն:

- Գուշակելու բան էլ չկա: Ակնհայտ է,- պատասխանեց Անանունը,- դա Կոպենհագենն է կամ էլ մեկ այլ մեծ քաղաք: Հստակ չեմ կարող ասել, դրանք մեկը մյուսին նման են, բայց, վստահաբար, դա մեծ քաղաք է:

- Դա ջրի կաթիլ է ջրափոսից,- արտաբերեց Կրիբլե-Կրաբլեն:





Ետնի, այստեղից շատ հեռու, ուր թռչում են ծիծեռնակները, երբ մեզ մոտ ձմեռ է լինում, ապրում էր մի թագավոր, որն ուներ տասնմեկ տղա և մեկ աղջիկ՝ անունը էլիզա: Տասնմեկ արքայազն եղբայրները դպրոց էին գնում՝ աստղերը կրծքներին և սրերը կողքներից կախ. նրանք ոսկե գրատախտակների վրա գրում էին ադամանդե քարեգրիչներով և կարողանում էին այնպես հիանալի արտասանել, որքան որ հիանալի կարդում էին: Միանգամից երևում էր, որ արքայազններ են: Իսկ քույրը՝ էլիզան, նստում էր հայելակուռ նստարանին և թերթում էր մի պատկերագիրք, որի համար կես թագավորություն էին վճարել:

Օ՛հ, որքան լավ էին ապրում այդ երեխաները, միայն թե այդպես երկար չտևեց...

Երեխաների հայրը, որն ամբողջ երկրի թագավորն էր, ամուսնացավ մի չար թագուհու հետ, որը չափազանց վատ էր վարվում խեղճ երեխաների հետ: Նրանք այդ բանը զգացին



հենց առաջին օրը. պալատում մեծ խնջույք էր, և երեխաները խաղում էին՝ զբաղեցնելով ու զվարճացնելով հյուրերին, բայց փոխանակ հյուրասիրության համար բոլոր թխվածքներն ու տապակած խնձորները ստանալու՝ խորթ մայրը նրանց թեյի բաժակի մեջ լցված ավազ տվեց ու ասաց, որ կարող են պատկերացնել, թե դա հյուրասիրություն է:





Մի շա-  
բաթ հետո նա  
փոքրիկ Էլիզա-  
յին գյուղ ուղար-  
կեց՝ ինչ-որ  
գյուղացիների  
մոտ, իսկ հետո խեղճ  
արքայազնների  
մասին  
այնքան  
սուտ բաներ  
պատմեց թա-  
գավորին, որ  
թագավորը սկսեց  
նրանց մասին  
ընդհանրապես հոգ  
չտանել:  
– Դե՛, թո՛նք աշ-  
խարհի չորս կողմը  
և ձեր գլուխը պա-  
հե՛ք, դարձե՛ք  
մե՛ծ ձայնազուրկ  
թռչուններ,– ասաց  
չար թագուհին:

Այնուամենայնիվ, նա չկարողա-

ցավ իր ուզած չափով վատություն անել. արքայազնները դարձան տասնմեկ գեղեցիկ վայրի կարապներ, տարօրինակ ճիչ արձակելով պալատի լուսամուտից թռան պուրակի և անտառների վրայով:

Դեռ խաղաղ այգաբաց էր, երբ նրանք թռան գյուղացիների այն խրճիթի վրայով, ուր դեռ քնած էր իրենց քույրը՝ Էլիզան: Նրանք սավառնեցին խրճիթի տանիքի վրայով, պտտեցին իրենց երկար պարանոցները, թափահարեցին թևերը, բայց ոչ ոք չլսեց ու չտեսավ նրանց: Եվ ստիպված կրկին սլացան վերև՝ դեպի ամպերը, ամպերից վեր, դեպի մեծ աշխարհի և իջան լայնատարած մութ անտառը, որ ձգվում էր մինչև ծովի ափերը:

Իսեղճ փոքրիկ Էլիզան գյուղացու խրճիթում խաղում էր կանաչ տերևով. ուրիշ խաղալիք չուներ. ծակել էր տերևը, որի միջով նայում էր արևին, և նրան թվում էր, թե իր եղբայրների վճիտ աչքերն է տեսնում: Իսկ երբ արևի ջերմ ճառագայթները շողում էին աղջկա այտերի վրա, նա հիշում էր իր եղբայրների համբույրները:

Միապաղաղ օրերը հաջորդում էին մեկը մյուսին: Քամին օրորում էր խրճիթի մոտ բուսած վարդի թփերն ու վարդերին շշնջում. «Աշխարհում կամ ձեզնից գեղեցիկ մեկը», – վարդերը գլուխները տարուբերում էին և ասում. «Էլիզան մեզնից սիրուն է»: Եվ կիրակի օրը, երբ ծեր կինը, իր տան առաջ նստած, աղոթագիրք էր կարդում, քամին թերթում էր





գրքի թերթերն ու ասում. «Աշխարհում ի՞նչ է քեզնից ավելի բարեպաշտ», աղոթագիրքը պատասխանում էր. «Էլիզան»: Ե՛վ վարդերը, և՛ աղոթագիրքը մաքուր ճշմարտությունն էին ասում:

Երբ լրացավ Էլիզայի տասնհինգ տարին, նրան ուղարկեցին տուն: Հենց որ թագուհին տեսավ, թե ինչպիսի՞ գեղեցկուհի է դարձել նա, զայրացավ և սկսեց ատել նրան: Նա մեծ բավականությամբ Էլիզային իր եղբայրների պես վայրի կարապ կդարձներ, բայց չհամարձակվեց դա միանգամից անել, որովհետև թագավորն ուզում էր տեսնել իր աղջկան:

Վաղ առավոտյան թագուհին գնաց մարմարաշեն լոգարան, որ զարդարված էր հրաշագեղ ծածկոցներով ու փափուկ բարձերով, բռնեց երեք դոդոշ, համբուրեց նրանց և առաջինին ասաց.

– Երբ Էլիզան լոգարան մտնի, կցատկես նրա գլխին, որ նա էլ քեզ պես դանդաղաշարժ դառնա: Իսկ դու, – ասաց մյուսին, – կցատկես Էլիզայի ճակատին, որ նա էլ քեզ պես անճոռնի դառնա, այնպես որ հայրը նրան չճանաչի: Կպառկես նրա սրտին, – շնչաց երրորդին, – որ չարսիրտ դառնա և տանջվի իր չարսրտությունից:

Այս ասելով՝ նա դոդոշներին բաց թողեց վճիտ ջրի մեջ, և ջուրն իսկույն կանաչ գույն ստացավ: Թագուհին կանչեց Էլիզային, ստիպեց, որ շորերը հանի ու ասաց, որ ջուրը մտնի: Երբ Էլիզան սուզվեց ջրի մեջ, դոդոշներից մեկը խճճվեց նրա մազերի մեջ, մյուսը նստեց ճակատին, իսկ երրորդը՝ կրծքին, բայց Էլիզան նույնիսկ չզգաց դա: Հենց որ դուրս եկավ ավազանից, տեսավ, որ ջրի վրա լողում են երեք կարմիր կակաչներ: Եթե դոդոշները վիուկի համբույրով թունավորված չլինեին, կարմիր վարդեր էին դառնալու և հանգստանալու էին

նրա գլխի վրա և կրծքին: Աղջիկը չափազանց բարեպաշտ էր ու անմեղ, որ կախարդանքը ազդեր նրա վրա:

Տեսնելով այդ՝ չարսիրտ թագուհին Էլիզայի մարմնին հունական ընկույզի հյութ քսեց, այնպես որ նա մուգ շագանակագույն դարձավ, գեղեցիկ դեմքին գարշահոտ քսուք քսեց, ապա խճճեց աղջկա հրաշալի մազերը: Այժմ արդեն չքնաղ Էլիզան անճանաչելի էր դարձել: Այդ պատճառով էլ թագավորը, նրան տեսնելով, վախեցավ և ասաց, որ դա իր հարազատ աղջիկը չէ: Ոչ ոք չէր ճանաչում Էլիզային՝ բացի շղթայակապ շնից ու ծիծեռնակներից, բայց դրանք խեղճ արարածներ էին, ո՞վ էր նրանց լսողը:

Խեղճ Էլիզան լաց եղավ ու մտածեց իր տասնմեկ եղբայրների մասին, որոնք չկային: Հետո նա այդպես տխուր գաղտնի դուրս եկավ պալատից, ամբողջ օրը թափառեց դաշտերում ու ճահճուտներում, մինչև որ հասավ մեծ անտառին: Էլիզան ինքն էլ չէր իմանում, թե ո՞ր պիտի գնա, բայց նա այնքան տխուր էր ու այնպես էր կարոտել հայրական տնից արտաքսված եղբայրներին, որ որոշեց փնտրել ու գտնել նրանց:

Դեռ նոր էր Էլիզան անտառ մտել, երբ մութը վրա հասավ, և նա ճանապարհը կորցրեց: Այն ժամանակ աղջիկը տեղավորվեց փափուկ մամուռի վրա, աղոթեց և գլուխը հենեց մի կոճղի: Անտառում խոր լռություն էր տիրում, օդը մեղմ էր, կանաչների ու մամուռների մեջ կանաչ ճրագների նման կայծկլտում էին հարյուրավոր լուսատուիկներ, իսկ երբ Էլիզան ձեռքը կամացուկ դիպավ ճյուղերից մեկին, շողշողուն միջատներն ընկնող աստղերի պես թափվեցին նրա շուրջը:

Ամբողջ գիշեր Էլիզան երազում իր եղբայրներին էր տեսնում. կրկին երեխաների պես խաղում էին միասին, ադամանդե քարեգրիչներով գրում էին ոսկե գրատախտակների վրա և

թերթում էին հրաշալի նկարազարդ գիրքը, որը կես թագավորություն արժեք: Բայց առաջվա պես նրանք գրատախտակի վրա գծիկներ ու զրոներ չէին գրում, ո՛չ. նրանք պատմում էին իրենց քաջագործությունների և այն ամենի մասին, ինչ ապրել էին ու լսել: Իսկ գրքի նկարները կենդանի էին. թռչունները երգում էին, մարդիկ իջնում էին գրքի էջերից ու խոսում էլիզայի և նրա եղբայրների հետ: Եվ ամեն անգամ, երբ էլիզան շրջում էր թերթը, նրանք արագ ցատկում էին իրենց տեղը, որ նկարները չխառնվեն իրար:

Երբ էլիզան արթնացավ, արեգակն արդեն բարձրացել էր: Ճիշտ է, նա արևը պարզորոշ տեսնել չէր կարող, քանի որ բարձր ծառերը նրա վրա էին փռել իրենց խճճված ու խիտ ճյուղերը, բայց արևի ճառագայթները կայծկլտացող ոսկե շղարշի պես խաղում էին բարձրում: Կանաչ խոտը հրաշալի բուրում էր, իսկ թռչնակներն այնքան էին մոտենում էլիզային՝ ուր որ է նրա ուսերին կնստեին: Նա ջրի խոխոջյուն լսեց. մի քանի մեծ աղբյուրներ կային, որոնք, իրար խառնվելով թափվում էին, սքանչելի ավազե հատակով լճակի մեջ: Ճիշտ է, լճակի չորս կողմը խիտ թփեր էին աճել, բայց եղջերուները մի տեղ լայն ճանապարհ էին բացել, և էլիզան այդտեղով մոտեցավ ջրի ափին: Լճակի ջուրն այնքան թափանցիկ էր, որ եթե քամին չշարժեր թփերն ու ճյուղերը, նա կմտածեր, թե դրանք նկարված են հատակին, որովհետև յուրաքանչյուր տերև հստակ արտացոլվում էր ջրում՝ անկախ նրանից՝ արևը շողում էր նրա վրա, թե այն աճում էր ստվերում:

Էլիզան սաստիկ վախեցավ, երբ հայելու մեջ տեսավ իր դեմքը. այն այնքան շագանակագույն և սարսափելի էր: Բայց հենց որ փոքրիկ ձեռքերը թրջեց և շփեց աչքերն ու ճակատը, նրա սպիտակաթույր մաշկը նորից փայլեց: Այդժամ նա հանվեց



ու մտավ զուլալ ջրի մեջ. նրա նման չքնանղ արքայադուստր ամբողջ աշխարհում չէր գտնվի:

Երբ հագնվեց ու հյուսեց իր երկար մազերը, մոտեցավ քչքչան աղբյուրին, բռով ջուր խմեց, ապա շարունակեց գնալ անտառով՝ ինքն էլ չիմանալով, թե ուր: Նա շարունակում էր մտածել իր եղբայրների մասին, նա մտածում էր բարի Աստծու մասին, որը չէր լքի իրեն. չէ՞ որ Նա էր հրամայել աճել վայրի խնձորենիներին, որ իրենց պտուղներով հագեցնեն սովյալներին, և հենց Նա էր, որ ուղղորդեց իրեն դեպի այդպիսի մի խնձորենի, որի ճյուղերը կռացել էին պտուղների ծանրությունից: Քաղցը հագեցնելուց հետո Էլիզան խնձորենու ճյուղերի տակ հենարաններ դրեց ու շարժվեց դեպի անտառի ամենամուխ խորքերը: Այնտեղ այնպիսի լռություն էր տիրում, որ լսում էր իր սեփական քայլերը, լսում էր ոտքերի տակ ընկած ամեն մի չոր տերևի խշխշոցը: Չէր երևում ոչ մի թռչուն, արևի ոչ մի շող չէր կարող թափանցել այդ մթին թավուտը: Բարձրաբուն հսկա ծառերն այնքան խիտ էին, որ երբ Էլիզան նայեց իր դիմաց, նրան թվաց, թե իր առջև գերաններով պատ է շարված, որի ներսում ինքը բանտարկված է: Օ՛հ, նա երբևէ նման միայնություն չէր զգացել:

Վրա հասավ խավար գիշերը: Մամուռի մեջ ոչ մի լուսատուիկ լույս չէր տալիս: Էլիզան տխուր-տրտում պառկեց քնելու: Եվ հանկարծ նրան թվաց, թե գլխավերևի ճյուղերը հետ-հետ քաշվեցին, և Տերը հեզ աչքերով իրեն է նայում, իսկ տերևների միջից դուրս էին նայում հրեշտակները:

Երբ առավոտյան Էլիզան արթնացավ, ինքն էլ չգիտեր՝ երձգ էր իր տեսածը, թե՞ իրականություն:

Նա մի քանի քայլ արեց ու հանդիպեց մի ծեր կնոջ, որ ձեռքին հատապտուղներով լի զամբյուղ ուներ: Կինը Էլիզային

մի բուռ դրանցից տվեց, իսկ Էլիզան նրան հարցրեց՝ արդյոք չի՞ տեսել այս անտառով ձիավարող տասնմեկ արքայազնների:

– Ո՛չ,– ասաց ծեր կինը,– բայց ես երեկ տեսա տասնմեկ կարապ՝ գլուխներին ոսկե թագեր, որոնք լող էին տալիս մոտակա գետում:

Եվ ծեր կինը Էլիզային տարավ դեպի մի բլրի գագաթ, որի տակով հոսում էր գետը: Գետի երկու ափերին ծառերն իրար էին մեկնել իրենց երկար, տերևախիտ ճյուղերը: Եվ այնտեղ, որ մասում գետը լայն էր, որ կարողանան իրար հասնել, ծառերը դուրս էին հանել հողից արմատները և թեքվել ջրի վրա այնքան, քանի դեռ ճյուղերն իրար չէին հանդիպել: Էլիզան հրաժեշտ տվեց ծեր կնոջը և գետի հունով գնաց այնտեղ, ուր այն թափվում էր մեծ ծովի մեջ:

Եվ ահա երիտասարդ աղջկա առջև բացվեց լայնատարած ծովի սքանչելի պատկերը, բայց այնտեղ չէր երևում ոչ մի նավաստի, ոչ մի մակույկ չկար, որով աղջիկը կարողանար շարունակել իր ճանապարհը: Նա նայեց ափի անթիվ անհամար մանրիկ քարերին: Ջուրն այնպես էր հղկել դրանք, որ քարերը բոլորովին կլորացել էին: Ծովի դուրս նետած մյուս իրերը ևս՝ ապակին, երկաթն ու քարերը, կրում էին ալիքների հետքերը: Մինչդեռ ջուրն ավելի փափուկ էր Էլիզայի նուրբ ձեռքերից: Այս ամենը տեսնելով՝ Էլիզան մտածեց. «Ալիքներն անդադրում գլորվում են իրար հետևից և ամենակարծր առարկաներն էլ կարողանում են հղկել, ողորկ դարձնել: Ես էլ կաշխատեմ անդադրում: Շնորհակալ եմ ձեզնից ձեր տված գիտության համար, փայլփլուն, արագահոս ալիքներ: Սիրտս ինձ ասում է, որ մի օր դուք ինձ կտանեք իմ սիրելի եղբայրների մոտ»:

Ջրիմուռների մեջ ընկած էր տասնմեկ հատ սպիտակ

կարապի փետուր, հավաքեց դրանք ու փնջեց: Փետուրների վրա դեռևս կաթիլներ էին շողշողում. ո՞վ գիտե՝ ցո՞ղ էին դրանք, թե՞ արցունք: Ամայի էր ծովափը, բայց նա չէր տխրում. քանզի ծովը փոփոխական է, և մի քանի ժամվա ընթացքում այդտեղ շատ ավելի բան կարելի էր տեսնել, քան քաղցրահամ ջրով լճի ափին մի ամբողջ տարում: Եթե մեծ սև ամպեր էին ծածկում երկինքը, ծովը կարծես ասում էր. «Ես էլ կարող եմ սևանալ», – հետո քամին փչում էր ու ալիքները կրկին սպիտակում էին: Իսկ եթե ամպերը վարդագույն էին լինում, և քամին՝ հանդարտված, ծովն էլ նման էր լինում վարդի թերթիկի. նա մերթ սպիտակին էր տալիս, մերթ կանաչ գույն էր ստանում, բայց, որքան էլ խաղաղ էր թվում, ափով մեկ միշտ մեղմ ալեբախություն էր լինում. ջուրը հանդարտ բարձրանում էր ու իջնում քնած երեխայի կրծքի պես:

Երբ արևը մայր էր մտնում, Էլիզան հանկարծ տեսավ ոսկե թագերով տասնմեկ վայրի կարապների, որոնք մեկը մյուսի հետևից դեպի ցամաք էին թռչում, ասես երկար սպիտակ ժապավեն: Էլիզան բարձրացավ ժայռի վրա և թաքնվեց մի թփի հետևում, իսկ կարապները, իրենց խոշոր սպիտակ թևերը թափահարելով, իջան նրանից ոչ հեռու:

Երբ արեգակը ծածկվեց ծովի հետևում, կարապները ցած թափեցին իրենց փետուրները և դարձան տասնմեկ գեղեցիկ արքայազներ՝ Էլիզայի եղբայրները: Նա բարձր բացականչեց, չնայած նրանք արդեն շատ էին փոխվել, հասկացավ, որ իր եղբայրներն են: Նա նետվեց՝ գրկելու եղբայրներին, ամեն մեկի անունը տվեց, և նրանք էլ այնքան ուրախացան, երբ տեսան իրենց փոքր քրոջը, որը մեծացել էր ու գեղեցկացել: Նրանք մերթ ծիծաղում էին, մերթ լալիս և հասկացան, թե որքան անգուր է վարվել իրենց հանդեպ խորթ մայրը:

- Մենք՝ եղբայրներս,- ասաց ամենամեծը,- որպես վայրի կարասներ, թռչում ենք, քանի դեռ երկնքում արև կա, իսկ երբ արևը մայր է մտնում, մենք մարդկային կերպարանք ենք ստանում: Այդ պատճառով էլ մայրամուտին մենք պետք է միշտ ամուր հենարանի վրա լինենք, քանզի եթե մենք մարդ դառնանք, ամպերի տակ



թոշելիս ցած կընկնենք: Մենք այստեղ չենք ապրում, այլ ծովի մյուս կողմի հրաշալի մի երկրում: Բայց ճանապարհը երկար է և այնտեղ հասնելու համար հարկավոր է կտրել-անցնել մեծ ծովը, իսկ ճանապարհին չկա մի կղզի, որտեղ մենք կկարողանայինք գիշերել: Միայն ուղիղ ծովի մեջտեղում մի մենավոր փոքր ժայռ կա, որի վրա էլ կարողանում ենք իրար ամուր սեղմված հանգստանալ: Եթե ծովն ալեկոծվում է, ջրի շիթերը թոչում են մեր գլխի վրայով: Բայց մենք շնորհակալ ենք Աստծուն, որ այն տվել է մեզ: Այդտեղ մենք մեր մարդկային կերպարանքով գիշերում ենք, առանց դրա մեզ երբեք չէր հաջողվի այցելել մեր սիրելի հայրենիքը: Տարեկան միայն մեկ անգամ մենք կարող ենք այցելել մեր հայրենիք՝ թռիչքի համար ընտրելով ամառվա ամենաերկար երկու օրերը: Այստեղ մենք մնում ենք տասնմեկ օր և թոչում ենք այն մեծ անտառի վրայով, որտեղից երևում է այն պալատը, որտեղ ծնվել ենք մենք, և որտեղ ապրում է մեր հայրը: Երևում է նաև այն եկեղեցու բարձր աշտարակը, որի մոտ հանգչում է մեր մայրը: Այստեղ նույնիսկ թփերն ու ծառերը, կարծես, հարազատ են մեզ: Դաշտերում, ինչպես մեր մանկության օրերին, վազվզում են վայրի ձիերը, իսկ ածխագործն առաջվա պես երգում է նույն երգերը, որոնց մեղեդու տակ պարում էինք, երբ փոքր էինք: Այստեղ է մեր հայրենիքը, այստեղ է ձգտում մեր սիրտը, և այստեղ մենք գտանք քեզ, մեր թանկագին քույրիկ: Մենք այստեղ ևս երկու օր կմնանք, իսկ հետո պետք է կտրենք-անցնենք ծովը դեպի այն հրաշալի, բայց մեզ օտար երկիրը: Սակայն քեզ ինչպե՞ս տանենք մեզ հետ, մենք ո՞չ նավ ունենք, ո՞չ մակույկ:

– Իսկ ես ի՞նչ անեմ, որ ձեզ ազատեմ կախարդանքից, – հարցրեց քույրը:



Այսպես նրանք գրուցեցին համարյա ամբողջ գիշերը՝ ընդամենը մի քանի ժամ քնելով:

Էլիզան արթնացավ կարապների թևերի աղմուկից: Եղբայրները նորից թռչուն էին դարձել և ճախրում էին՝ օդում մեծ շրջաններ գործելով, իսկ հետո տեսադաշտից կորան: Բայց նրանցից մեկը՝ ամենափոքրը, մնաց: Կարապն իր գլուխը դրեց քրոջ ծնկներին, իսկ քույրը շոյում ու հարդարում էր նրա ճերմակ թևերը: Ամբողջ օրը նրանք միասին անցկացրին, իսկ երեկոյան դեմ մյուսներն էլ եկան: Երբ արևը մայր մտավ, բոլորն իրենց բնական կերպարանքը ստացան:

– Վաղը մենք պետք է թռչենք այստեղից և մի ամբողջ տարի վերադառնալ չենք կարող,– ասաց եղբայրներից մեկը:– Բայց քեզ այստեղ թողնել չենք կարող: Դու քաջություն կունենամս մեզ հետ թռչելու: Հիմա, երբ ես նորից մարդ եմ, իմ ձեռքերն այնքան ուժեղ են, որ կարող եմ քեզ գրկած շրջել ամբողջ անտառում, ուրեմն միթե մեր բոլորի թևերն այնքան ուժեղ չեն, որ կարողանանք թռչելով քեզ անցկացնենք ծովի մյուս կողմը:

– Այո՛, տարեք ինձ ձեզ հետ,– ասաց Էլիզան:

Ամբողջ գիշերը նրանք ցանց էին գործում ճկուն ուռենուց և ամուր եղեգից: Ցանցը մեծ ու դիմացկուն ստացվեց, և Էլիզան պառկեց դրա մեջ: Երբ արևը ծագեց ու եղբայրները կարապ դարձան, կտուցներով բռնեցին ցանցը և բարձրացան դեպի ամպերը՝ իրենց հետ տանելով սիրելի քրոջը, որ դեռ քնած էր: Արևի ճառագայթներն ընկնում էին ուղիղ աղջկա երեսին, և կարապներից մեկը սկսեց թռչել նրա գլխի վրայով այնպես, որ իր լայն թևերով ստվեր անի:

Նրանք արդեն շատ հեռու էին ցամաքից, երբ Էլիզան արթնացավ. նրան թվաց, թե դեռ երազի մեջ է. այնքան տարօրինակ էր նրա համար ծովի վրայով բարձր, օդում

թռչելը: Նրա կողքին ընկած էր սքանչելի հատապտուղներով մի ճյուղ և համեղ արմատեղենի մի փունջ. այդ ամենը հավաքել ու քրոջ մոտ էր դրել ամենափոքր եղբայրը: Էլիզան շնորհակալությամբ ժպտաց նրան՝ հասկանալով, որ այդ նա էր թռչում իր գլխի վրայով և թևերով ստվեր անում:



Նրանք այնքան էին բարձրացել, որ ծովում հանդիպած առաջին իսկ նավը ջրերի վրա լողացող ճայ էր թվում: Նրանց հետևում մի մեծ ամպ կար, որը իսկական սար էր հիշեցնում, և այդ ամպի վրա Էլիզան տեսավ տասնմեկ կարապների և իր սեփական հսկայական շարժվող ստվերները: Այդպիսի տեսարան նա երբևէ չէր տեսել: Բայց որքան արեգակը վեր էր բարձրանում, ամպը փոքրանում էր, և նրանց թռիչքի ստվերները հետզհետե չքանում էին:

Ամբողջ օրը նրանք թռչում էին օդում սուրացող նետերի պես, բայց, միևնույն է, սովորականից դանդաղ էին գնում. հիմա նրանք իրենց քրոջն էլ էին տանում: Երեկոն մոտենում էր, սկսեց ուժեղ քամի փչել: Էլիզան սարսափով էր հետևում, թե ինչպես է արևը մայր մտնում, իսկ մենավոր ժայռը դեռ չէր երևում: Հանկարծ նրան թվաց, թե կարապները թևերը հուսակտուր թափահարում են օդում: Ա՛հ, այդ ինքն էր մեղավոր, որ նրանք չեն կարողանում բավականաչափ արագ թռչել:

Արևը մայր կմտնի, նրանք մարդ կդառնան, բոլորը կընկնեն ջուրն ու կխեղդվեն: Եվ նա սկսեց ամբողջ սրտով աղոթել Աստծուն, բայց ժայռը չէր երևում: Քամու ուժեղ պոռթկումները փոթորիկ էին գուշակում, իսկ թուխալը կապարե զանգվածի պես մեծ ալիքով մոտենում էր, կայծակը կայծակի հետևից էր փայլատակում:

Ահա արեգակն արդեն ծովի եզրին էր: Էլիզայի սիրտը արագ բաբախեց, երբ կարապներն այնպիսի աներևակայելի արագությամբ դեպի ցած սլացան, որ նրան թվաց, թե բոլորն ընկնում են, բայց ոչ, կարապները շարունակում էին թռիչքը: Արեգակն արդեն կիսով չափ թաքնվել էր ծովի հետևում, երբ Էլիզան իրենց ներքևում տեսավ մի փոքրիկ ժայռ, որ կարծես գլուխը ջրից դուրս հանած ծովացույլ լիներ: Արեգակն արագորեն մայր էր մտնում. այժմ արդեն այն փոքրիկ աստղի էր հիշեցնում, բայց նրա ոտքը դիպավ պինդ հողին, և այդ վայրկյանին արեգակը հանգավ, ինչպես այրվող թղթի վերջին կայծը: Էլիզան իր շուրջը տեսավ եղբայրներին, որոնք կանգնել էին իրար ձեռք բռնած: Նրանք հազիվ էին տեղավորվում փոքրիկ ժայռի վրա: Ծովը զարկում էր ժայռին, և ջուրն անձրևի պես լցվում էր նրանց վրա: Երկինքը լուսավորվում էր ամեն բոպե բոցավառվող կայծակներից, և հարվածը հարվածի հետևից որոտում էր շանթը, բայց քույրն ու եղբայրներն իրար ձեռք բռնեցին և սաղմոս երգեցին, որից խաղաղվեցին ու գոտեպնդվեցին:

Լուսաբացին երկինքը պարզ էր ու խաղաղ: Հենց որ արևը ծագեց, կարապները նորից Էլիզային վերցրին ու թռան՝ ժայռը թողնելով հետևում: Ծովը դեռ ալեկոծվում էր, և նրանք վերևից տեսնում էին, թե ինչպես սպիտակ փրփուրները միլիոնավոր կարապների երամի պես լողում էին մուգ կանաչ ջրի երեսին:

Երբ արևն ավելի վեր բարձրացավ, Էլիզան իր առջև տեսավ օդում կիսով չափ լողացող մի լեռնապատ երկիր՝ սառցե շող-շողուն լեռնագագաթներով: Լեռների մեջ լայն փռված էր մեկ մղոն ձգվող ապարանք՝ բազմահարկ ամուր սյունաշարով: Ներքևում օրորվում էին արմավենու անտառները և ջրաղացի քարի մեծությամբ շքեղ ծաղիկները: Էլիզան հարցրեց՝ արդյոք դա՞նք է այն երկիրը, ուր թռչում են իրենք, բայց կարապները գլուխները բացասաբար շարժեցին, քանի որ նրա տեսածը Ֆաթա Մորգանայի՝ հարափոփոխ հրաշալի օդային ապարանքն է, որտեղ ոչ մի մարդ չի կարող ոտք դնել:

Էլիզան նորից իր հայացքը հառեց ապարանքին, և հանկարծ լեռները, անտառներն ու ապարանքը փլվեցին, միաձուլվեցին ու հետո վեր խոյացան քսան լիովին իրար նման հոյակերտ եկեղեցիներ՝ իրենց բարձր զանգակատներով, սրածայր լուսամուտներով: Էլիզային թվաց, թե լսում է երգեհոնի ձայնը, բայց դա ծովն էր: Այժմ եկեղեցիները բոլորովին մոտ էին, բայց հանկարծ դրանք դարձան նավերի մի ամբողջ տորմիլ: Նավերը լողում էին հենց Էլիզայի տակ: Նա ուշադիր ներքև նայեց ու տեսավ, որ դրանք նավեր չեն, այլ պարզապես ջրի վրա լողացող ծովային մառախուղ է: Այդպես նրա աչքի առաջ մի տեսարանը փոխարինում էր մյուսին, մինչև որ վերջապես երևաց իսկական ցամաքը, դեպի ուր թռչում էին նրանք: Այնտեղ կային մայրու անտառներով ծածկված հրաշալի կապույտ լեռներ, քաղաքներ ու ամրոցներ: Արևի մայր մտնելուց դեռ շատ առաջ Էլիզան արդեն նստած էր լեռան լանջին՝ մի մեծ քարանձավի դիմաց, որը պատվել էր գեղեցիկ կանաչավուն լիանաներով, որոնք ասես ձեռագործ գորգեր լինեին:

<sup>1</sup> Մթնոլորտում հանդիպող բարդ օպտիկական երևույթ, որը բաղկացած է մի-րաժների մի քանի ձևերից: Իր անունը ստացել է ի պատիվ անգլիական լեգենդներում հաճախ հանդիպող Մորգա փերու, որը Արթուր թագավորի քույրն էր:

- Տեսնենք, թե գիշերն ինչ երազ կտեսնես,- ասաց կրտսեր եղբայրը քրոջը՝ ցույց տալով նրա ննջարանը:

- Կուզեի երազում տեսնել, թե ինչպես եմ փրկում քեզ,- ասաց քույրը, և այդ միտքն այնպես պարուրեց նրան, նա այնպես ջերմագին սկսեց աղոթել Աստծուն օգնության համար, որ աղոթում էր նույնիսկ քնի մեջ:

Եվ ահա, նրան թվաց, թե ինքը թռչում է շատ բարձր, դեպի Ֆարթա Մորգանայի երկնային ապարանքը, և այդ փերին ինքն է ընդառաջ գալիս իրեն: Նա լուսաճաճանչ էր ու գեղեցիկ, բայց միաժամանակ զարմանալիորեն նման էր այն ծեր կնոջը, որ անտառում իրեն հատապտուղներ տվեց ու պատմեց ոսկեթագ կարապների մասին:

- Քո եղբայրներին կարելի է փրկել,- ասաց նա,- բայց դու կունենան այդքան քաջություն ու համառություն դա անելու համար: Ծովի ջուրը փափուկ է քո նուրբ ձեռքերից, բայց հղկում է քարերը: Սակայն ջուրը չի զգում այն ցավը, որ կզգան քո մատները. ջուրը սիրտ չունի, բայց քո սիրտը կկծկվի անհանգստությունից ու տանջանքից: Տեսնում ես ձեռքիս եղինջը: Այսպիսի եղինջ շատ կա քարանձավի մոտ, որտեղ քնում ես: Եվ միայն այս ու մեկ էլ այն եղինջը, որ բուսնում է գերեզմանատներում, պետք է օգտագործել, լավ հիշիր: Պետք է քաղես այս եղինջից, թեպետ ձեռքերդ կծածկվեն բշտիկներով: Հետո ոտքերով կտրորես և ստացված խյուսից ամուր թելեր կմանես: Այդ թելից կգործես տասնմեկ պարեգոտ՝ երկար թևքերով, և հենց զցես դրանք կարապների վրա, կախարդանքը կվերանա: Բայց հիշիր, որ այն թուպից, երբ կսկսես քո աշխատանքը, մինչև վերջացնելը ոչ մի բառ չպիտի արտասանես, թեկուզ գործդ տարիներ տևի: Առաջին իսկ բառը, որ դուրս կթռչի քո բերանից, դաշույնի պես կխրվի



քո եղբայրների սրտի մեջ: Ուրեմն նրանց կյանքը կախված է լինելու քո լեզվի ծայրից: Լավ հիշիր այս ամենը:

Եվ փերին այրող եղինջը դիպցրեց աղջկա ձեռքին: Էլիզան ցավ զգաց, ինչպես այրվածքից, և արթնացավ: Արդեն օրը լուսացել էր, և այն տեղում, ուր քնել էր, ընկած էր մի եղինջ, իսկ և իսկ այնպիսին, ինչպիսին նա տեսել էր երազում: Նա ծնրադիր փառք տվեց Տիրոջը և ապա դուրս եկավ քարանձավից, որ սկսի իր աշխատանքը:

Էլիզան քաղում էր կրակի պես այրող անդուր եղինջը, և նրա նուրբ մատներն ու բազուկները ծածկվում էին մեծ-մեծ բշտիկներով: Բայց նա ուրախությամբ դիմանում էր ցավին՝ հույսով, որ այդպես կհաջողվի փրկել սիրելի եղբայրներին: Հետո նա բոբիկ ոտքերով տրորեց յուրաքանչյուր եղինջը և սկսեց կանաչ թել մանել:

Երբ արևը մայր մտավ, եղբայրները եկան և անհանգստացան, տեսանելով, որ քույրը չի խոսում: Մտածեցին, թե դա չարասիրտ խորթ մոր նոր կախարդանքն է, բայց երբ տեսան աղջկա ձեռքերը, հասկացան, որ իրենց փրկության համար է այդպես անում: Եղբայրներից ամենափոքրը լաց եղավ: Նրա արցունքներն ընկնում էին քրոջ ձեռքերի վրա, և որտեղ արցունք էր կաթում, բշտիկները չքանում էին, ու ցավն անցնում էր:

Ամբողջ գիշերն Էլիզան անցկացրեց իր աշխատանքի վրա՝ հանգստի մասին չմտածելով. նա ուզում էր սիրելի եղբայրներին հնարավորինս շուտ փրկել: Ամբողջ հաջորդ օրը, երբ կարապները թռել-գնացել էին, նա մնաց իր միայնության մեջ, բայց ժամանակը երբեք այդպես արագ չէր անցել: Մի պարեգոտն արդեն պատրաստ էր, և նա անցավ երկրորդին:

Հանկարծ լեռներում որսորդական եղջերափողի ծայներ

լավեցին: Էլիզան վախեցավ, և ձայներն ավելի էին մոտենում, ապա շների հաչոց լավեց: Նա ցնցվեց ու մտավ քարանձավը, իր հավաքած ամբողջ եղինջը կապոց արեց և նստեց վրան: Այդ թույլ թփերի հետևից դուրս թռավ մի մեծ շուն, ապա երկրորդը, երրորդը: Նրանք բարձր ձայնով հաչում էին և հետ ու առաջ վազում: Մի քանի թույլից հետո քարանձավի մոտ հավաքվեցին բոլոր որսորդները: Նրանցից ամենագեղեցիկը, որ այդ երկրի թագավորն էր, մոտեցավ Էլիզային. դեռ երբեք նա այդպիսի գեղեցկուհի չէր տեսել:

– Ինչպես ես այստեղ հայտնվել, չքնանդ աղջնակ,– հարցրեց թագավորը, բայց Էլիզան միայն գլուխն օրորեց. նա չհամարձակվեց խոսել, որովհետև նրա լուրջությունից էր կախված իր եղբայրների կյանքն ու փրկությունը: Նա ձեռքերը թաքցրեց

գոգնոցի տակ, որ թագավորը չտեսնի, թե ինչպես է տանջվում:

– Գնանք ինձ հետ,– ասաց թագավորը.– դուք չպետք է մնաք այստեղ: Եթե դու նույնքան բարի ես, որքան գեղեցիկ, ես քեզ մետաքս ու թավիշ կհագցնեմ, գլխիդ ոսկե թագ կդնեմ, և դու կարես իմ ամենալավ պալատում:

Եվ նա Էլիզին



բարձրացրեց իր ձիու վրա: Էլիզան լաց էր լինում ու ձեռքերը կոտրատում, բայց թագավորն ասաց.

– Ես միայն քո երջանկությունն եմ ուզում. կգա ժամանակ, և դու շնորհակալ կլինես ինձ:

Եվ թագավորը, աղջկան թամբին՝ իր դիմաց նստեցրած, վարգեց դեպի սարերի խորքերը, իսկ որսորդները ձիավարում էին նրանց հետևից: Մայրամուտին իրենց առջև բացվեց շքեղ արքայական քաղաքը՝ իր բարձր եկեղեցիներով ու գմբեթներով, և թագավորն Էլիզային տարավ պալատ, որտեղ բարձր մարմարաշեն դահլիճներում շատրվաններ էին ցայտում, իսկ պատերն ու առաստաղները զարդարված էին գեղեցիկ նկարներով: Բայց Էլիզան ոչ մի բանի չէր նայում, նա լալիս էր ու թախծում: Աղջիկն անտարբեր կանգնեց սպասուհիների առաջ, որոնք թագավորական զգեստներ հագրին նրան, մազերի մեջ մարգարտաշարեր հյուսեցին և եղինջից այրված մատներին նուրբ ձեռնոցներ հագրին:

Նա շլացուցիչ գեղեցիկ էր այդ պերճանքների մեջ, որ բոլոր պալատականները խոնարհվեցին նրա առաջ, իսկ թագավորը նրան հոչակեց իր հարսնացու, թեպետ արքեպիսկոպոսը գլուխն օրորում էր ու թագավորի ականջին շշնջում, թե անտառի գեղեցկուհին պետք է որ կախարդուհի լինի, որը կուրացրել է բոլորին և կախարդել է թագավորի սիրտը:

Բայց թագավորն արքեպիսկոպոսին չլսեց, նրան հրամայեց, որ երաժշտություն հնչի, մատուցվեն ամենաթանկարժեք ուտեստներն ու գեղեցիկ աղջիկները պարեն: Ապա ինքը բուրավետ պարտեզի և շքեղազարդ դահլիճների միջով ուղեկցեց Էլիզային: Բայց Էլիզան ոչ մի անգամ նույնիսկ չժպտաց, կարծես նրա աչքերին հավիտենական ունեցվածքի ու ժառանգության պես թախիժ էր իջել: Բայց, ահա, թագավորը

բացեց մի փոքրիկ սենյակի դուռ, որն այն սենյակի կողքին էր, որտեղ Էլիզան պետք է քներ: Այդ սենյակը զարդարված էր թանկարժեք կանաչ գորգերով և շատ նման էր այն քարանձավին, որտեղ մինչ այդ Էլիզան էր: Հատակին ընկած էր մի կծիկ եղնջաթել, որ ինքն էր մանել, իսկ առաստաղից կախված էր Էլիզայի գործած պարեգուռը. այդ ամենը, որպես արտասովոր բաներ, իր հետ վերցրել էր որսորդներից մեկը:

– Ահա այստեղ դու կարող ես հիշել քո նախկին կացարանը, – ասաց թագավորը, – ահա՛ և քո աշխատանքը. գուցե երբեմն ցանկանաս մտքերդ հաճելիորեն ցրել անցյալի հիշողություններով ու քեզ շրջապատող այս շքեղության մեջ:

Տեսնելով իր սրտին այնքան մոտ բաներ՝ Էլիզան ժպտաց, ու այտերը շիկնեցին. նա մտածեց իր եղբայրների փրկության մասին և համբուրեց թագավորի ձեռքը, իսկ թագավորն աղջկան սեղմեց իր կրծքին և հրամայեց, որ բոլոր զանգերն ազդարարեն իրենց հարսանիքի մասին: Անտառի համր գեղեցկուհին դարձավ երկրի թագուհի:

Այդժամ արքեպիսկոպոսը չար խոսքեր փսփսաց թագավորի ականջին, բայց այդ խոսքերը թագավորի սրտին չէին հասնում, և հարսանիքը պետք է տեղի ունենար, արքեպիսկոպոսն ինքը պետք է թագ դներ նորահարսի գլխին: Նա դիտմամբ նեղ օղն այնպես թեքեց Էլիզայի ճակատին, որ ցավեցնի աղջկան: Բայց Էլիզայի սիրտն ավելի ամուր էր սեղմում մի ուրիշ «օղակ»՝ իր եղբայրների հանդեպ կարոտը. նա չզգաց այդ մարմնական ցավը: Նրա շուրթերն առաջվա պես սեղմված էին. մի խոսքը բավական էր, որ եղբայրները զրկվեին կյանքից: Մինչդեռ նրա աչքերը փայլում էին բարեսիրտ ու գեղեցիկ թագավորի հանդեպ սիրուց, որն ամեն ինչ անում էր Էլիզային երջանկացնելու համար: Էլիզան օրեցօր ավելի ու ավելի էր կապվում թագավորի

հետ: Օ՛հ, եթե կարողանար վստահել նրան, հայտներ իր տանջանքների մասին... Բայց, ավանդ, աղջիկը պետք է համր լիներ, պետք է լուռ ավարտեր իր աշխատանքը: Դրա համար էլ գիշերները նա կամացուկ հեռանում էր թագավորի մոտից, գնում էր իր քարանձավանման սենյակը և այնտեղ գործում էր պարեգոտը պարեգոտի հետևից: Իսկ երբ սկսեց յոթերորդը գործել, եղնջաթելը սպառվեց:

Էլիզան գիտեր, որ իրեն պետքական եղինջներն աճում են գերեզմանատանը, բայց ինքն իր ձեռքով պետք է քաղեր դրանք, ուրեմն ինչպե՞ս գնար այնտեղ:

«Օ՛հ, ինչ բան է մատների ցավը համեմատած այն տանջանքի հետ, որ իմ սրտում է,– մտածում էր Էլիզան:– Ես պետք է խիզախեմ, Աստված ինձ անօգնական չի թողնի»:

Աղջիկը վախը սրտում, կարծես ինչ-որ վատ բան էր արել, թաթերի վրա իջավ լուսնի լույսով ողողված պարտեզը և երկար ծառուղիների միջով ու ամայի փողոցներով շարժվեց դեպի գերեզմանատուն: Այնտեղ նա տեսավ, որ լայն գերեզմանաքարից մեկի վրա հավաքվել, շրջան են կազմել մի խումբ անճոռնի վիուկներ, որոնք նետեցին իրենց վրայի ցնցոտիները, ասես պատրաստվում էին լողանալու, իսկ հետո իրենց ոսկրացած մատներով սկսեցին քանդել նոր գերեզմանները, այնտեղից հանել ննջեցյալներին ու նրանց միսը ուտել: Էլիզան ստիպված էր անցնել նրանց մոտով, և նրանք իրենց չար աչքերը հառեցին նրա վրա: Բայց աղջիկը աղոթեց, քաղեց եղինջն ու տարավ պալատ:

Նրան միայն մեկ մարդ՝ արքեպիսկոպոսը տեսավ: Երբ մյուսները քնած էին, նա արթուն էր մնացել և այժմ ուներ ապացույցներ, որ ինքը ճիշտ էր եղել, երբ կասկածել էր թագուհուն: «Ուրեմն նա իսկապես վիուկ է,– մտածում էր արքեպիսկոպոսը,– այդ պատճառով էլ կարողացել է կախարդել



թագավորին ու ամբողջ ժողովրդին»:

Խոստովանախցում նա թագավորին պատմեց, թե ինչ էր տեսել և ինչ էր կասկածում: Բայց հենց որ չար խոսքերը դուրս եկան նրա բերանից, պատերին կախված սրբապատկերները տարուբերեցին իրենց գլուխները, կարծես ուզում էին ասել՝ «Ճիշտ չէ, Էլիզան անմեղ է»: Բայց ուրիշ բացատրություն տվեց. իբր սրբերն էլ, իրենց գլուխը շարժելով, վկայում են թագուհու գործած մեղքի մասին: Թագավորի աչքերից արցունքի երկու խոշոր կաթիլ հոսեց, և կասկածը սրտում նա գնաց տուն: Գիշերը ձնացրեց, թե քնել է, բայց քունը փախել էր աչքերից: Եվ ահա, նա տեսավ, թե ինչպես է Էլիզան վեր կենում անկողնուց: Եվ ամեն գիշեր աղջիկը նույն բանն էր անում, իսկ թագավորը լուռ հետևում էր աղջկան ու տեսնում, թե ինչպե՞ս է նա թաքնվում իր փոքր սենյակում:

Թագավորն օրեցօր ավելի էր մոայլվում: Էլիզան այդ նկատում էր, բայց պատճառը չէր հասկանում: Դա անհանգստացնում էր նրան ու կրկնապատկում էր եղբայրների հանդեպ թախիծը, որ վաղուց բույն էր դրել նրա սրտում: Նրա աղի արցունքները թափվում էին իր արքայական թավիշի ու ծիրանու վրա և շողշողում ադամանդի նման: Ովքեր տեսնում էին թագուհու այդ շքեղ զգեստը, նախանձում էին նրան: Վերջապես աշխատանքն ավարտվելու վրա էր. պակասում էր ընդամենը մեկ պարեգոտ, բայց նա այլևս ոչ եղնջաթել ուներ, ոչ եղինջ: Մի վերջին անգամ հարկավոր էր գնալ գերեզմանատուն և մի քանի բուռ եղինջ քաղել: Էլիզան վախը սրտում մտածում էր միայնակ քայլելու և սարսափելի վիուկների մասին: Բայց նրա կամքն այնքան ուժեղ էր, որքան և Աստծու հանդեպ հավատը:

Եվ ահա Էլիզան ճանապարհ ընկավ, բաց թագավորն ու արքեպիսկոպոսը հետևեցին նրան և տեսան, թե ինչպե՞ս նա անցավ գերեզմանատան ցանկապատը: Իսկ երբ նրա հետևից

ներս մտան, նրանք տեսան գերեզմանաքարերին նստած վիուկներին, այնպես, ինչպես Էլիզան էր տեսել: Եվ թագավորը հայացքը շրջեց. չէ՞ որ այդ վիուկների մեջ էր գտնվում նա, ում գլուխը այդ գիշեր հանգչում էր իր կրծքին:

– Թող ժողովուրդը դատի նրան, – ասաց թագավորը:

Եվ ժողովուրդը դատավճիռ ընդունեց այրել թագուհուն խարույկի վրա:

Էլիզային թագավորական շքեղ դահլիճներից փոխադրեցին մի մութ ու խոնավ խուց, ուր լուսամուտներին երկաթե ճաղերի միջով սուլոցով ներս էր թափանցում քամին: Թավիշի ու մետաքսի փոխարեն նրան տվեցին իր հավաքած եղինջի խուրձը, որը Էլիզային պիտի ծառայեր որպես բարձ, իսկ որպես վերմակ ու դռնակ պետք է լինեին նրա գործած կոպիտ ու ծակող պարեգոտները: Բայց դրանից ավելի թանկագին ընծա ոչ ոք չէր կարող տալ նրան, և Էլիզան, աղոթելով, նորից սկսեց իր գործը: Դրսում փողոցային տղաները նրան ծաղրող երգեր էին երգում: Ոչ մի շունչ սփոփանքի խոսքով չկարեկցեց աղջկան:

Երեկոյան լուսամուտի վանդակաճաղի մոտ կարապի թևերի շրշյուն լսվեց. դա նրա ամենակրտսեր եղբայրն էր, որ գտել էր իր քրոջը: Էլիզան բարձրաձայն հեկեկաց ուրախությունից, թեպետև գիտեր, որ իրեն ընդամենը մի գիշերվա կյանք է մնացել: Բայց աշխատանքն արդեն գրեթե ավարտվում էր, իսկ եղբայրներն իր հետ էին:

Կատարելով թագավորին տված իր խոստումը՝ արքեպիսկոպոսն այցելության եկավ նրան կյանքի վերջին ժամերին: Բայց Էլիզան գլուխն օրորեց և հայացքով ու նշաններով խնդրեց նրան, որ հեռանա: Այդ գիշեր նա պետք է վերջացներ իր աշխատանքը, այլապես զուր կկորչեր ամեն ինչ՝ և նրա տանջանքները, և արցունքները, և անքուն գիշերները: Արքեպիսկոպոսը հեռացավ՝ նախատինքի խոսքեր ասելով աղջկան,

բայց խեղճ Էլիզան գիտեր, որ ինքն անմեղ է, և շարունակեց իր աշխատանքը:

Աշխատելով ինչ-որ բանով օգնել նրան՝ մկնիկներն սկսեցին հատակին վազվզել ու եղինջի ցողունները հավաքելով նրա ոտքերի մոտ բերել, իսկ կեռնեխը նստեց լուսամուտի վանդակին և ամբողջ գիշեր իր ամենաուրախ երգերն էր երգում, որ գոտեպնդի աղջկան:

Լուսաբացին՝ արևածագից մի ժամ առաջ էր, որ պալատի դարպասի դիմաց եկան տասնմեկ եղբայրները և թագավորի հետ հանդիպում պահանջեցին: Նրանց պատասխանեցին, թե անկարելի է. թագավորը դեռ քնած է, և ոչ ոք չի համարձակվի արթնացնել նրան: Եղբայրները շարունակեցին խնդրել, ապա սկսեցին սպառնալ: Եկավ պահակախումբը, անգամ թագավորն ինքը դուրս եկավ իմանալու, թե ինչ է պատահել: Բայց հենց այդ ակնթարթին արևը ծագեց, և եղբայրները չքացան, իսկ պալատի վերևում ճախրում էին տասնմեկ վայրի կարապներ:

Ամբողջ ժողովուրդը քաղաքից դուրս հորդեց՝ տեսնելու, թե ինչպե՞ս են այրելու վիուկին: Մի զառամյալ ձի քաշում էր այն սայլը, որի մեջ նստած էր Էլիզան: Նրան մի քուրճ էին հագցրել, իսկ նրա հրաշալի երկար մազերը թափված էին ուսերին, այտերի վրա կենդանության հետք չկար, շրթունքները շարժվում էին կամացուկ՝ աղոթք շնջալով, իսկ մատները շարունակում էին գործել կանաչ եղնջաթելը: Նույնիսկ մահապատժի ճանապարհին նա չէր դադարեցնում իր անավարտ աշխատանքը: Տասը պարեգոտ արդեն պատրաստի նրա ոտքերի դիմաց էին դրված, իսկ տասնմեկերորդի վրա դեռ գործում էր:

Ամբոխը ծաղրում էր նրան.

– Նայեցե՞ք վիուկին, ո՞նց է մրմնջում, չլինի՞ աղոթագիրք է ձեռքինը: Չէ, նորից իր կախարդական կապարե արտիճուկներն են ձեռքին: Եկեք խլենք ու պատառ-պատառ անենք:

Ամբոխը շրջապատեց Էլիզային, որ ձեռքից խլեն ու պատա-  
ռոտեն նրա աշխատանքը: Բայց մինչ կհասցնեին հասնել նրան,  
տասնմեկ ճերմակ կարապները թռան եկան, նստեցին նրա  
շուրջը՝ սայլի եզրերին, և սկսեցին թափահարել իրենց մեծ  
թևերը: Ամբոխը սարսափած հետ քաշվեց:

– Սա երկնային նշան է. նա անմեղ է,– շնչում էին շատերը,  
բայց չէին համարձակվում բարձրաձայն ասել այդ:

Երբ դահիճը բռնեց Էլիզայի ձեռքը, նա շտապ կարապների  
վրա նետեց տասնմեկ պարեգոտները, որոնք ակնթարթորեն  
վերածվեցին տասնմեկ գեղեցիկ արքայազնների: Բայց ամենա-  
փոքրին մի ձեռքի փոխարեն մնացել էր կարապի մի թևը:  
Էլիզանայդպես էլ չէր կարողացել ավարտել վերջին պարեգոտը,  
որի մի թևքը պակաս էր մնացել:

– Այժմ ես կարող եմ խոսել,– բացականչեց Էլիզան:– Ես  
անմեղ եմ:

Եվ բոլոր մարդիկ, որոնք տեսան կատարվածը, խոնարհ-  
վեցին նրա առաջ՝ որպես սրբի, բայց Էլիզան ուշաթափ ընկավ  
եղբայրների գիրկը. ուժերի անդադար լարումը, վախն ու ցավը  
ծանր էին ազդել նրա վրա:

– Այո՛, նա անմեղ է,– ասաց ամենաավագ եղբայրը և պատմեց  
ողջ եղելությունը:

Եվ մինչ նա խոսում էր, օդում տարածվեց անուշ բուրմունք,  
որը կարծես միլիոնավոր վարդերի բույրն ունենար, որով-  
հետև խարույկի ամեն մի կտոր փայտը, արմատներ ու ճյու-  
ղեր արձակելով, դարձել էր կարմիր վարդերով ծածկված  
բուրումնավետ մի մեծ ու բարձր թուփ: Իսկ թփի ամենավերին  
ծայրին աստղի նման շողշողում էր սպիտակափայլ մի ծաղիկ:  
Թագավորը պոկեց այդ ծաղիկը, դրեց Էլիզայի կրծքին, և նա  
արթնացավ երջանկությունն ու խաղաղությունը սրտում:

Բոլոր եկեղեցիների զանգերը  
դողանջեցին իրենք իրենց, թռչունները  
թռան եկան մեծ երամներով, և հետ՝ դեպի  
պալատ շարժվեց հարսանյաց այնպիսի մի  
հանդիսավոր թափոր, որպիսին դեռ ոչ մի  
թագավոր չի ետել:







**Ա**յո, դա փոքրիկ փոքրիկ Տուկն էր, որի իրական անունը Տուկ չէր, բայց այդ ժամանակ նա դեռ լավ չէր կարողանում խոսել և ինքն իրեն Տուկ էր կոչում: Տուկը պետք է որ նշանակեր Կառլ, և լավ է, եթե որևէ մեկը գիտեր դա: Նա ստիպված էր հոգ տանել իրենից շատ ավելի փոքր քրոջը՝ Գուստավային, իսկ հետո նա պետք է սովորեր իր դասերը, բայց դե երկու գործը միաժամանակ անելը դժվար էր: Իսեղճ տղան նստում էր՝ փոքրիկ քրոջը ծնկներին դրած և երգում էր իր իմացած բոլոր երգերը՝ աչքը չկտրելով իր դիմաց դրված աշխարհագրության դասագրքից. հաջորդ օրվա համար հանձնարարված էր անգիր սովորել Ջելանդիայի բոլոր քաղաքներն ու դրանց մասին հնարավոր ամեն ինչ իմանալ:

Վերջապես վերադարձավ նրա մայրը, որն ինչ-որ տեղ էր գնացել, և վերցրեց Գուստավային: Տուկը արագ վազեց պատուհանի մոտ ու կարդաց, այնքան կարդաց, որ գրեթե

կուրացավ. աստիճանաբար ավելի էր մթնում, իսկ մայրը մոմ գնելու գումար չուներ:

- Ահա, ծեր լվացարարուհի է գալիս նրբանցքի կողմից,-  
ասաց մայրը՝ պատուհանից դուրս նայելով:- Նա հերիք չէ  
հագիվիազ է շարժվում, մեկ էլ ստիպված է ջրով լի դույլը  
տանել: Խելոք եղիր, Տուկ, դուրս արի և օգնիր ծեր կնոջը:

Տուկը տեղն ու տեղը դուրս վազեց և օգնեց, բայց երբ  
վերադարձավ սենյակ, բավականին մթնել էր. մոմի մասին  
խոսք չկար էլ: Նա ստիպված պառկեց քնելու:

Տուկին որպես անկողին էր ծառայում թիկնակով ու  
նստատեղի տակ արկղով մի հին փայտե նստարան: Նա  
պառկեց, բայց չէր դադարում մտածել  
իր դասի մասին՝ Զելանդիայի  
քաղաքների և այն ամենի մասին,  
ինչ իրենց ուսուցիչն էր պատմել:  
Նա պետք է դասը կարդար, բայց



այդ պահին նա չէր կարող անել դա՝ արդեն ուշ էր, և տղան գիրքը դրեց բարձի տակ. նա լսել էր, որ դա դասը հիշելու հիանալի միջոց է, բայց դե հույսդ լիովին հո չե՞ս կարող դրա վրա դնել:

Եվ ահա Տուկը պառկել էր անկողնում ու անդադար մտածում էր: Հանկարծ ինչ-որ մեկը համբուրեց նրա աչքերն ու շուրթերը. այդ ժամանակ նա և՛ քնած էր, և՛ կարծես արթուն ու իր դիմաց տեսավ ծեր լվացարարուհուն, որը բարի աչքերով նայեց նրան ու ասաց.

- Ամոթ կլինի, եթե վաղվա դասդ չիմանաս: Դու ինձ օգնեցիր, հիմա էլ ես կօգնեմ քեզ: Տերը միշտ այդպես կանի:

Հենց այդ րոպեին Տուկի գլխի տակ դրված գրքի թերթերը խշխշացին ու սկսեցին իրենք իրենց թերթվել: Ապա ձայն հնչեց.

- Ղն, ղն, ղուղարիղն...

Դա հավ էր, այն էլ Կյոզե<sup>1</sup> քաղաքից:

- Ես հավ եմ Կյոզեից,- և նա Տուկին պատմեց, թե Կյոզեում քանի բնակիչ կա, իսկ հետո պատմեց այն ճակատամարտի մասին, որ տեղի էր ունեցել այդտեղ: Դա անգամ ավելորդ էր, Տուկն առանց նրա պատմելու էլ գիտեր դրա մասին:

- Կրիբլե, Կրաբլե, բճմ,- և ինչ-որ բան ընկավ: Դա փայտե թռչուն էր, որ ներս ընկավ: Դա թուփակ էր, որը որպես թիրախ ծառայում էր Պրեստե քաղաքի հրաձիգների շրջանում: Նա ասաց, որ այդ քաղաքում այնքան բնակիչ կա, որքան որ սպիներ կան իր մարմնի վրա, և գլուխ գովեց, որ Թորվալդսենը<sup>2</sup> մի ժամանակ իր հարևանն է եղել:- Բճմ, ես ինձ

<sup>1</sup> Քաղաք Դանիայում: Դանիացիներն ունեն մի կատակ-արտահայտություն. «Ցույց տալ հավին Կյոզեից», որը նշանակում է հետաքրքրասերին բարձրացնել հատակից՝ ականջներից բռնած:

<sup>2</sup> Բերտել Թորվալդսեն - դանիացի քանդակագործ, 1770-1844 թթ.:

լիովին հարմարավետ եմ զգում:

Բայց փոքրիկ Տուկն արդեն անկողնում պառկած չէր, այլ ձիու թամբին էր և քառատրոփ վարգում էր: Նա նստած էր շքեղ զինավառ հագուստներով ասպետի թիկունքում, և զինվորի գլխարկի վրա ծածանվում էր փետրափունջը: Նրանք անցան անտառն ու հայտնվեցին հնագույն Վորդիպգորգ քաղաքում, ուր եռուզեռ էր. քաղաքի բլրի վրա վեր էր խոյանում արքայական դղյակը, որի բարձր աշտարակների պատուհաններից պայծառ լույսեր էին հորդում: Պալատում ուրախություն էր՝ երգ ու պար: Վալդեմար արքան պարում էր գույնզգույն հագուստներով պալատական կանանցով շրջապատված:

Բայց ահա առավոտյան, երբ արևը դեռ հազիվ էր ծագել, թագավորական պալատն ու քաղաքը փուլ եկան, աշտարակները մեկը մյուսի հետևից անհետացան, և միայն դրանցից մեկը վերջում մնաց բլրի վրա. քաղաքը փոքրացավ ու աղքատացավ:

Գրքերը թևերի տակ դրած դպրոցականները, որոնք շտապով վազում էին դեպի դպրոց, ասում էին.

- Մեր քաղաքը երկու հազար բնակիչ ունի:- Բայց դա սուտ էր, այդքան բնակիչ չկար:

Փոքրիկ Տուկը նորից անկողնում հայտնվեց՝ նրան թվաց, թե արթմնի երազ է տեսնում. ինչ-որ մեկը կրկին նրա մոտ էր կանգնած:

- Փոքրիկ Տուկ, փոքրիկ Տուկ,- նրան ականջին ձայն հասավ: Դա փոքրիկ նավաստին էր, որը կարծես թե կաղետ<sup>1</sup> էր, բայց դե չէ, կաղետ չէր:- Ես քեզ ողջույններ եմ բերել Կորսյորից, որը ապագա ունեցող, աշխույժ քաղաք է: Այդ քաղաքն ունի իր

<sup>1</sup> Միջնակարգ ռազմական դպրոցի սան:

սեփական փոստային կառքերն ու շոգենավերը: Ժամանակին այն խեղճ քաղաք էին համարում, բայց այդ կարծիքն արդեն հնացել է: «Ես փոված եմ ծովի վրա,- ասում է Կորսյորը,- ունեմ խճուղիներ և պուրակներ: Ես եմ լույս աշխարհ բերել բանաստեղծին, այն էլ ինչ ծիծաղաշարժ բանաստեղծի<sup>1</sup>, չէ որ ոչ բոլոր բանաստեղծներն են ծիծաղ շարժում: Ես անգամ պատրաստվում էի իմ նավերից մեկն ուղարկել շուրջերկրյա նավարկության... Ենթադրենք, ես չեմ ուղարկել, բայց դե կարող էի ուղարկել: Եվ ինչ հրաշալի եմ ես բուրում հենց քաղաքի դարպասների մոտից: Ամենուր հրաշալի վարդեր են աճում»:

Փոքրիկ Տուկը նայեց նրանց, ու նրա աչքերի դիմաց կարմիր ու կանաչ շաղ առաջացավ, իսկ երբ գույները խամրեցին ու անցան, նա տեսավ անտառապատ մի զառիթափ՝ թափանցիկ ծովախորշի վրա: Զառիթափի վրա վեր էր խոյանում մի հոյակերտ հին եկեղեցի՝ երկու բարձր սրածայր աշտարակներով: Ներքևում խոխոջալով հոսում էր աղբյուրներից բխող ջուրը: Աղբյուրի մոտ նստած էր ծեր արքան՝ ոսկեգօծ թագը երկարամազ գլխին: Դա Ռոար արքան էր, որի անունով էր աղբյուրը, իսկ աղբյուրի անունով՝ մոտակայքում փոված քաղաքը կոչվում էր Ռոսկիլդե<sup>2</sup>: Դեպի եկեղեցի տանող արահետով ձեռք ձեռքի բռնած քայլում էին Դանիայի թագավորն ու թագուհին՝ գլխներին ոսկե թագեր: Հնչում էր երգեհոնի մեղեդին, աղբյուրները խոխոջում էին: Փոքրիկ Տուկը ամեն ինչ տեսնում էր ու լսում:

- Չմոռանան տեղանունները,- ասաց Ռոար արքան:

Հանկարծ ամեն ինչ չքացավ: Բայց ո՞ր չքվեց: Ասես թեր-

<sup>1</sup> Յենս Բագգեսեն, հայտնի դանիացի բանաստեղծ-հումորիստ ու սատիրիկ, 1764-1826 թթ.:

<sup>2</sup> Դանիայի հին մայրաքաղաքը, որի եկեղեցում թաղված են Դանիայի թագավորներն ու թագուհիները:





թեցին գրքի էջը: Տղայի դիմաց կանգնած էր քաղհան անող մի ծեր կին: Նա եկել էր Սորյո անունով քաղաքից, ուր խոտ է աճում անգամ հրապարակում: Նա գլխին և ուսերին իր հին մոխրագույն քաթանե գոգնոցն էր գցել. գոգնոցն ամբողջովին թաց էր, հավանաբար անձրև էր եկել:

- Այո,- ասաց նա և նրան պատմեց Հուլբերգի ծիծաղաշարժ կատակերգությունների, Վալդեմար թագավորի և Աբսալոն եպիսկոպոսի մասին, հետո կծկվեց-կռացավ, գլուխն օրորեց՝ ասես պատրաստվում էր ցատկել, ու կռկռաց.

- Կվան, կվան, կվան, ինչ խոնավ, թաց ու հանգիստ է Սորյոյում: Կվա...- և նա գորտ դարձավ:- Կվա,- և նա նորից կին դարձավ:- Պետք է եղանակին համապատասխան հագնվել,- ասաց նա,- այստեղ խոնավ է, շմտ խոնավ: Իմ քաղաքը նման է շշի, որի մեջ մտնում ես խցանի միջով, բայց դե պետք է նաև դուրս գալ, չէ՞: Նախկինում այն հայտնի էր իր ձկներով, իսկ հիմա շշի հատակում կարմրաթուշ պատանիներ են, որոնք այդտեղ տարբեր՝ հունական և հրեական իմաստություններ են սովորում: Կվա:

Տղան ոչ այն է գորտերի կռոց էր լսում, ոչ այն է՝ ճահիճներում երկարաճիտ կոշիկների չլմփոց. նույն ձայնն էր՝ միանման ու ձանձրալի, որի ներքո Տուկը խոր քուն մտավ: Հենց լավ էլ արեց:

Բայց նաև այս քնի մեջ նա երազ տեսավ, այլապես ինչ էր այդ. նրա կապտաշյա և դեղին գանգուրներով փոքրիկ քույր Գուստավան անսպասելիորեն չափահաս գեղեցկատես աղջիկ դարձավ: Եվ թեպետ թևեր չունեիր, բայց կարողանում էր թռչել, և նրանք երկուսով թռան Ջելանդիայի վրայով. կանաչ անտառների ու կապույտ ջրերի վրայով:

Լսում ես արքադադի ձայնը, փոքրիկ Տուկ: Ծուղրուղրու: Ահա,

հավերը թռչում են Կյոզեից: Դու հավի ֆերմա կունենաս, այն-  
քան մեծ, այնքան մեծ, որ սոված չես մնա ու նեղություն չես  
կրի: Ինչպես ասում են, պետք է կրակել թութակին, և հարուստ  
ու երջանիկ կլինես: Քո տունը վեր կխոյանա Վալդեմար թա-  
գավորի աշտարակի պես, և շքեղորեն զարդարված կլինի  
այնպիսի մարմարե արձաններով, ինչպիսին որ Պրեստոյի  
մոտակայքում գտնվող արձաններն են, դե՛, դու ինձ հասկանում  
ես: Քո անունը կթնդա ու կճանապարհորդի աշխարհով մեկ,  
ինչպես նավը, որը պետք է նավարկեր Կորսորից, բայց  
Ռոսկիլդեում է: «Հիշիր տեղանունները,- ասաց Ռոար թա-  
գավորը,- լավ և խելամիտ կխոսես, փոքրիկ Տուկ, և երբ վեր-  
ջապես պառկես քո գերեզմանում, այնտեղ հանգիստ քնես,  
ինչպես...»:

- Ասես Սորյոյում լինեի,- ասաց Տուկն ու արթնացավ. պարզ-  
կա առավոտ էր, նա ոչինչ չէր հիշում իր տեսած երազներից:  
Բայց ոչ էլ պետք էր հիշել, որովհետև չի կարելի իմանալ, թե  
ինչ է սպասվում ապագայում:

Եվ նա ցատկեց անկողնուց, վերցրեց գիրքն ու արագ  
սովորեց դասը: Իսկ ծեր լվացարարուհին, գլուխը խցկելով  
դռան արանքը, գլխով արեց նրան ու ասաց.

- Շնորհակալ եմ երեկվա համար, օրհնյալ զավակ, թող մեր  
Տերը ի կատար ածի քո լավագույն երազը:

Իսկ փոքրիկ Տուկնը ընդհանրապես չգիտեր, թե ինչ երազ  
էր տեսել, բայց դե՛ Տեր Աստվածը գիտի:



**Ս**աստիկ ցուրտ էր այդ երեկո: Ձյուն էր տեղում. փողոցն աստիճանաբար ավելի ու ավելի էր մթնում: Ամանորին նախորդող երեկոն էր: Այդ ցուրտ ու մթին փողոցներում գլխաբաց ու բոկոտն թափառում էր մի աղքատ աղջնակ: Ճիշտ է, նա մաշիկներով էր դուրս եկել տնից, բայց ճում էին պետք այդ մեծ, շատ մեծ մաշիկները: Վերջին անգամ այդ մաշիկները հագել էր նրա մայրը, և դրանք աղջնակի ոտքից դուրս էին թռչել, երբ վախեցած կողքով սուրացող երկու կառքերից՝ արագ կտրել-անցել էր փողոցը: Մաշիկներից մեկն այդպես էլ չէր գտել, մյուսն էլ ինչ-որ տղա վերցրել ու փախել էր՝ ասելով, որ երբ երեխաներ ունենա, մաշիկից նրանց համար հիանալի օրորոց կսարքի:

Եվ ահա աղջնակը շարունակում էր բոկոտն թափառել. ոտքերը ցրտից ամբողջովին կապտել ու կարմրել էին: Նրա հնամաշ գոգնոցում մոխրագույն լուցկու տուփեր կային. մի տուփը ձեռքում էր պահել: Ամբողջ օրվա ընթացքում ոչ ոք նրանից







գեթ մեկ լուցկի չէր գնել. նա ոչ մի սկիլլինգ չէր վաստակել: Աղջնակը շարունակում էր քայլել սոված ու սաստիկ մրսած... Ինչ խեղճ տեսք ուներ նա: Ձյան փաթիլները թափվում էին նրա գեղեցիկ ու խարտյաշ գանգուրների վրա, որոնց գեղեցիկ լինելու մասին ինքը չէր էլ մտածում: Բոլորի պատշգամբներում լույսեր էին վառվում, փողոցում տարածվել էր տապակած սագերի հոտը. չէ՞ որ Ամանորի նախօրեն էր. այդ մասին էր նա մտածում:

Երկու տների կազմած անկյունում նա ծալապատիկ նստեց ու կծկվեց, բայց շարունակ մրսում էր: Թեպետ մրսում էր, տուն վերադառնալ չէր համարձակվում, որովհետև ոչ մի լուցկի չէր վաճառել, ոչ մի սկիլլինգ չէր վաստակել. հայրը կծեծեր նրան: Բացի այդ, իրենց տանն ավելի տաք չէր՝ ձեղնահարկում էին ապրում, որի մեծ ճեղքերը թեպետ ծղոտով ու լաթերով փակված էին, միևնույն է, քամին թափանցում էր: Նրա թաթիկները փայտացել էին: Ա՛հ, ընդամենը մի փոքրիկ լուցկին կարող էր տաքացնել նրան, եթե միայն համարձակվեր տուփից մեկ հատ վերցնել, պատին քսելով վառեր ու մատիկները տաքացնել:

Մեկ հատ հանեց: Չրըխկ... Ինչպե՛ս այն թշտաց ու վառվեց... Լուցկին փոքր մոմի պես տաք ու պայծառ կրակ արձակեց, երբ նա ձեռքերը պահեց դրա շուրջը: Բայց այն տարօրինակ լույս էր արձակում: Աղջկան թվաց, թե նստած է փայլուն արույրե բռնակներով ու կափարիչով մեծ երկաթյա վառարանի առջև: Ինչ հրաշալի էր կրակը բոցկլտում, որքան հաճելի էր: Աղջնակը ոտքերն առաջ պարզեց, որ դրանք նույնպես տաքացնի, բայց կրակը հանգավ, վառարանը չքացավ, և նրա ձեռքում մնաց միայն լուցկու մոխրացած հատիկը:

Նա ևս մեկ լուցկի վառեց՝ պատին քսելով, որը պայծառ բոցավառվեց: Երբ լույսն ընկավ պատի վրա, պատը նուրբ

շղարշի պես թափանցիկ դարձավ, և աղջիկը կարողացավ տեսնել դրա հետևում գտնվող սենյակը: Սեղանին ձյունաճերմակ սփռոց էր փռված, որի վրա դասավորված էր ճաշի համար նախատեսված փայլուն սպասքը: Խնձորներով ու սալորներով տապակած սագը հիանալի բույր էր արձակում, և ամենալավն այն էր, որ սագը ցատկեց ափսեի միջից և պատառաքաղն ու դանակը կրծքում խրված, ոտքերը հատակի վրա քարշ տալով՝ ուղիղ դեպի աղջիկը գնաց: Հետո լուցկին հանգավ, և նա տեսավ միայն հաստ սառը պատը: Աղջիկը ևս մեկ լուցկի վառեց և հայտնվեց ամենագեղեցիկ եղևնու տակ: Այն ավելի մեծ ու գեղեցիկ էր, քան այն, որը նախորդ Սուրբ Ծնունդին ապակե դռան հետևից տեսել էր հարուստ վաճառականի տանը: Եղևնին հազարավոր լույսերով էր զարդարված, իսկ վերևից ներքև նրան էին նայում խանութներում վաճառվող նկարների պես գունավոր նկարները: Փոքրիկը ձեռքերը առաջ պարզեց, բայց լուցկին մարեց, իսկ Սուրբծննդյան լույսերը սկսեցին ավելի ու ավելի վեր բարձրանալ և վերածվել պայծառ աստղերի. դրանցից մեկը երկնքից ցած գլորվեց՝ իր հետևից թողնելով երկար կրակե հետք:

«Ինչ-որ մեկը մահացավ», - մտածեց աղջնակը:

Նրա հանգուցյալ տատիկը, որը միակն էր աշխարհիս երեսին, որ սիրում էր աղջկան, ասում էր. «Երբ աստղ է ընկնում, ինչ-որ մեկի հոգին բարձրանում է Աստծու մոտ»:

Աղջիկը մի նոր լուցկի քսեց պատին: Կրկին լուսավորվեց շուրջբոլորը. փոքրիկի դիմաց կանգնեց պայծառ ու փայլուն, լուսաճառագ, բայց միևնույն ժամանակ հեզաբարո տատիկը:

- Տատիկ,- գոչեց փոքրիկը,- տար ինձ քեզ հետ: Գիտեմ, որ դու անհետանալու ես, երբ լուցկին այրվի-վերջանա: Դու անհետանալու ես տաք վառարանի, հիանալի տապակած սագի

ու գեղեցիկ մեծ եղևնու պես:

Եվ նա շտապով վառեց ձեռքին մնացած բոլոր լուցկիները. այնպես էր ուզում, որ տատիկն իր մոտ մնա: Եվ լուցկիներն այնպես պայծառ բոցավառվեցին, որ ցերեկվա լույսից էլ լուսավոր դարձավ: Տատիկը երբեք այդքան վեհաշուք ու գեղեցիկ չէր եղել: Նա աղջնակին իր գիրկն առավ, ու ճաճանչների և երջանկության մեջ երկուսով բարձրացան երկինք, դեպի վեր, ուր չկար ո՛չ ցուրտ, ո՛չ քաղց, ո՛չ էլ վախ. նրանք Աստծու հետ էին:

Տան անկյունում՝ պատին հենված, նստած էր կարմրաթուշ ու ժպիտը դեմքին աղջիկը, որը ցրտահարվել էր անցնող տարվա վերջին երեկոյան: Նոր տարվա արևը լուսավորեց փոքրիկի մահացած մարմինը: Սառն ու փայտացած փոքրիկը նստած

էր լուցկիները ձեռքին, որոնց մեկ տուփը գրեթե ամբողջովին վառված էր:

- Նա ցանկացել է տաքանալ,- ասում էին մարդիկ:

Եվ ոչ ոք չէր էլ պատկերացնում, թե ինչ գեղեցկություններ է նա տեսել և թե ինչ երջանիկ է իր տատիկի հետ դիմավորել Նոր տարին:






## Ծեր կաղնու վերջին երագը

**Ա**նտառում՝ ծովափին մոտ բարձր լանջի վրա, մի ծեր կաղնի էր աճում, որը, ո՛չ ավելի, ո՛չ պակաս երեք հարյուր վաթսունհինգ տարեկան էր: Ծառերի այդ տարիքը շատ չէ, այն նույնն է, ինչ մարդու համար կյանքի նույնքան օրերը: Մենք արթնանում ենք առավոտյան, քնում՝ գիշերը ու երագ տեսնում: Ծառի կյանքն այլ կերպ է. նա արթուն է մնում տարվա երեք եղանակներին և քնում է միայն ձմեռնամուտին: Ձմեռը նրա քնի ժամն է, նրա գիշերը, որը փոխարինում է օրվան, որը մենք անվանում ենք գարուն, ամառ ու աշուն: Ամառային տաք օրերին օրաբզեզները պտտվում էին կաղնու գագաթի շուրջը, նրանցից յուրաքանչյուրը վայելում էր կյանքը և ուրախ ճախրում, իսկ երբ հոգնում էր, իջնում էր կաղնու լայն, թարմ տերևներից մեկի վրա երանավետ հանգստի համար: Եվ ամեն անգամ ծառն ասում էր.

- Խեղճ փոքրիկ: Ողջ կյանքդ ընդամենը մեկ օր է: Ինչ կարճ է, ինչ տխուր է քո կյանքը:





- Տխոր,- պատասխանում էր օրաբզեզը:- Ինչ ես ասում: Ամեն ինչ այնքան գեղեցիկ է, այնքան լուսավոր ու ջերմ, և ես այնպես երջանիկ եմ:

- Բայց ընդամենը մեկ օր, հետո ամեն ինչ վերջանում է:



- Վերջանում,- ասում էր փոքրիկ արարածը,- ինչն է վերջանում: Դու նույնպես վերջանում ես:

- Ոչ: Ես գուցե ապրեմ քո կյանքի նման հազարավոր օրեր և իմ մեկ օրը մեկ տարվա երեք եղանակ է, այնքան երկար է, որ դու չես կարող պատկերացնել:

- Ոչ, քեզ ընդհանրապես չեմ հասկանում, դու ապրում ես իմ հազարավոր օրերի պես օրեր, իսկ ես հազարավոր ակնթարթներ ունեմ երջանիկ և ուրախ լինելու համար: Արդյոք ամբողջ աշխարհի գեղեցկությունը կվերջանամ, երբ դու մահանաս:

- Ոչ,- պատասխանում էր ծառը,- այն շատ ավելի երկար կտևի, հավերժության չափ երկար, այնքան, որ չեմ կարող անգամ պատկերացնել:

- Դե, ուրեմն, երկուսիս էլ միանման երկար կյանք է տրված, միայն թե մենք տարբեր կերպ ենք հաշվում:

Եվ օրաբզեզը պարում էր ու պտտվում օդում՝ ուրախանալով իր նուրբ, գեղեցիկ, թափանցիկ թավշյա թևերով, ուրախանալով երեքնուկի դաշտերի, մասրենու, շամբուկի և ցանկապատերին աճող այծատերևների բույրով լցված տաք օդով, իսկ գետնաստղի, գարնանային գնարբուկի և դաղձի բուրմունքն այնքան ուժեղ էր, որ փոքրիկ միջատը կարծես թեթևակի արբել էր: Ինչ երկար ու հիանալի օր էր՝ լի քաղցր զգացողություններով և ուրախությամբ: Իսկ երբ արևը մայր էր մտնում, օրաբզեզը հաճելի հոգնություն էր զգում: Թևիկներն արդեն չէին կարողանում տանել նրան, և նա դանդաղ իջնում էր փափուկ, ալիքվող խոտի վրա, տարուբերում էր գլուխն ու քաղցր քուն մտնում հավերժության մեջ:

- Խեղճ օրաբզեզ,- ասում էր կաղնին,- չափազանց կարճ էր կյանքդ:

Եվ ամռան յուրաքանչյուր օր կրկնվում էին նույն պարը, նույն խոսքերը, նույն հարցերն ու պատասխանները: Այդ ամենը կրկնվում էր սերնդեսերունդ: Նրանցից յուրաքանչյուրը հավասարապես երջանիկ և ուրախ էր:

Կաղնին արթուն էր մնում գարնանային առավոտներին, ամառային կեսօրներին ու աշնանային երեկոներին, և այժմ արդեն մոտենում էր քնի ժամը՝ նրա գիշերն էր գալիս. ձմեռնամուտ էր:

Փոթորիկները երգում էին.

- Բարի գիշեր, բարի գիշեր... Տերևները թափվեցին, տերևները թափվեցին: Մենք ենք պոկել դրանք, մենք ենք պոկել: Հիմա քնիր, քնիր: Մենք նանիկ կասենք, կօրորենք քեզ, վերջույթներդ կհանգստանան, հնամենի ճյուղերդ ճարճատում են հաճույքից: Դե, քնիր, սա քո երեք հարյուր վաթսունհինգերորդ գիշերն է, բայց ընդամենը մեկ տարեկան ես: Անհիշքուն քեզ, ամպերը ձնով կպատեն քեզ ու ոտքերիդ տաք ու փափուկ ծածկոց կփռեն: Անհիշքուն ու բարի երազներ:

Եվ հիմա վիթխարի կաղնին կանգնած էր տերևազուրկ՝ պատրաստ հանգստանալու երկար ձմռան ողջ ընթացքում և քնի մեջ տեսնելու երազներ իր ապրած կյանքի մասին այնպես, ինչպես մարդիկ են երազներում տեսնում:

Այո, նա նույնպես մի ժամանակ փոքրիկ է եղել, և կաղինն է եղել նրա համար օրորոց: Մարդկային հաշվարկներով կաղնին արդեն ապրում էր իր չորրորդ հարյուրամյակը: Նա ամենամեծ ու ամենագեղեցիկ ծառն էր անտառում: Նրա գագաթը բարձր էր բոլոր ծառերից ու երևում էր ծովի հեռվից, նավաստիների համար նա ծառայում էր որպես կողմնորոշիչ:

Նա չգիտեր, թե քանի աչք է փնտրում իրեն: Նրա բարձր

գագաթի վրա անտառային աղավնիները բներ էին հյուսել, կանչում էր կկուն, իսկ աշնանը, երբ տերևներն արդեն կարծես պղնձակուռ լինեին, չվող թռչունների երամները, մինչ ճանապարհ կրնկնեին լճի վրայով, հանգստանում էին նրա ճյուղերին: Բայց հիմա ձմեռ էր, ծառը զրկվել էր տերևներից, ու տեսանելի էին նրա մերկ, ծուռտիկ, կոշտուկավոր ճյուղերը: Ագռավներն ու ճայակները հերթով գալիս-նստում էին կաղնու ճյուղերին ու բամբասում էին սպասվող դժվար ժամանակներից և այն մասին, թե ինչ դժվար է ձմռանը կեր հայթայթելը:

Հենց Սուրբձննոյան գիշերն էր, երբ կաղնին տեսավ երբևէ տեսած երազներից ամենահիասքանչը: Պետք էր լսել այն: Ծառն ակնհայտ զգում էր, որ տոն է, կարծես լսում էր եկեղեցիների զանգերի ղողանջները, իսկ օրը մեղմ ու տաք էր՝ ինչպես ամռան սիրելի օրերը: Նա տարածեց իր կանաչ ու թարմ, վիթխարի գագաթի սաղարթը. արևի շողերը վազվզում էին իր տերևների ու ճյուղերի արանքում, իսկ օդը լի էր խոտի ու ծաղիկների բույրով, գույնզգույն թիթեռնիկները բռնոցի էին խաղում, օրաբզեզներն այնպես էին պարում, ասես ամեն ինչ հենց նրանց պարերի և ուրախության համար էր: Այն ամենը, ինչ տեղի էր ունեցել կաղնու երկար կյանքում, այժմ տոնական շքերթի պես անցնում էր նրա դիմացով: Նա տեսնում էր, թե ինչպես են անտառով ձիերին հեծած անցնում հին ժամանակների ասպետներն ու ազնվական կանայք՝ փետրավոր գլխարկներով ու յուրաքանչյուրի դաստակին՝ բազե, հնչում էին որսորդական եղջերափողերը, և հաչում էին շները: Նա տեսնում էր շողացող ասպազենքերով ու խայտաբղետ հագուստներով թշնամական զորքեր. նիզակներով ու տապարատեգերով զինված զինվորներն իրենց վրաններն էին

ամրացնում և հետո հավաքում, հսկման կրակը բոցկլտում էր, զինվորները երգում էին, ապա տեղավորվում իր ճյուղերի ներքո ու քնում: Նա տեսավ երջանիկ սիրահարների, որոնք լուսնի լույսի տակ հանդիպեցին իր մոտ ու իր մոխրականաչ կեղևին փորագրեցին իրենց անվան առաջին տառերը: Շատ տարիներ առաջ անհոգ թափառական երիտասարդները կաղնու ճյուղերից կիթառներ ու ոսկե տավիղներ էին կախել, հիմա դրանք ասես կրկին կախված էին, և հոգեթով երաժշտություն էր հնչում: Անտառային աղավնիները ղունդունում էին՝ փորձելով արտահայտել կաղնու ապրած զգացողությունները, իսկ կկուն կանչում ու ազդարարում էր, թե դեռ որքան ամառային օրեր են մնացել ապրելու իրեն:

Ապա մի պահ թվաց, թե նոր, զորեղ կյանք հոսեց ծառի բոլոր, անգամ ամենամանր արմատներով, բոլոր ճյուղերի ու տերևների միջով: Ծառը զգաց, որ սկսում է ձգվել, և բոլոր արմատներով զգաց, որ հողի տակ ջերմություն ու կյանք է հորդում: Նա նոր ուժերի հոսք զգաց, զգաց, որ աճում է դեպի վեր, դեպի վեր: Բունն արագ, անդադար վեր էր խոյանում, իսկ գագաթը դառնում էր լայնասաղարթ ու խիտ: Եվ որքան աճում էր, այնքան ավելանում էին ուժերն ու անսանձ ձգումը՝ ավելի երկարելու, ավելի բարձրանալու և հասնելու պայծառ ու տաք արևին:

Կաղնին արդեն ամպերից վեր էր, որոնք չվող սև թռչունների կամ սպիտակ կարապների երամների պես անցնում էին նրա տակով:

Ծառի ամեն տերև կարողանում էր տեսնել, քանզի յուրաքանչյուրն աչք ուներ. աստղերն անգամ կեսօրին էին տեսանելի՝ մեծ ու շողշողուն: Աստղերը շողում էին հեզահամբույր,

ջինջ զույգ աչքերի պես, որոնք ուրիշ, ծանոթ ու քնքուշ աչքեր էին հիշեցնում՝ երեխաների և իր մոտ ժամադրվող սիրահարների աչքեր:


Ինչ հրաշալի ու երանավետ պահեր էին: Բայց, միևնույն է, այդ ուրախ ապրումի ժամանակ անգամ նա ինչ-որ կարոտ էր զգում ու ցանկանում էր, որ ներքևում մնացած անտառի բոլոր ծառերը, թփերը, բույսերն ու ծաղիկները կարողանան բարձրանալ ու զգալ այդ ուրախությունն ու տեսնել այդ շքեղությունը:

Վիթխարի կաղնին անգամ երանելի քնի այդ ընկերներին լիարժեք երջանիկ չէր, նա ցանկանում էր իր երջանկությունը փոխանցել բոլորին՝ մեծերին ու փոքրերին՝ և այդ ցանկությունն այնպես ջերմ ու շատ էր թրթռում նրա յուրաքանչյուր ճյուղի ու տերևի մեջ, ինչպես սիրտը՝ մարդու կրծքի տակ:

Կաղնին օրորեց գլուխը, նայեց ցած՝ կարծես ինչ-որ բան էր փնտրում, և զգաց ուրցի բույրը, ապա ցախակեռասի և մանուշակների ավելի սուր բուրմունքը, նրան անգամ թվաց, թե լսում է կկվի կանչը:

Այո՛, ամպերի մեջ նկատելի դարձան անտառի կանաչ սաղարթները: Կաղնին իր ներքևում այլ ծառեր տեսավ. դրանք նույնպես աճում ու ձգվում էին դեպի երկինք: Թփերն ու բույսերը նույնպես ձգվում էին, մի մասն անգամ հողից կտրում էին իրենց արմատները, որպեսզի ավելի արագ թռչեին երկինք: Առջևում կեչին էր, նրա ճկուն, կայծակի սպիտակ փայլատակման պես ոլոր-մոլոր բունն ավելի ու ավելի էր ձգվում, ճյուղերը ծածանվում էին կանաչ դրոշների պես: Ամբողջ անտառը, անգամ եղեգների շագանակագույն փետրափնջերը բարձրանում էին երկինք: Թռչունները երգելով թռչում էին նրանց հետևից,





իսկ քամու տակ կանաչ երկար ժապավենի պես ծածանվող խոտի ցողունին նստել էր ծղրիդն ու թևիկներով թմբկահարում էր իր բարակ ոտիկների վրա: Մայիսյան բզեզները գվվում էին, մեղուները բզզում էին, բոլոր թռչունները երգում էին որքան ուժ ունեին. երգ ու երջանկություն էր ամենուր, մինչև երկինք:

- Իսկ որտե՞ղ է ջրային կարմիր ծաղիկը: Թող որ նա էլ լինի մեզ հետ- հարցրեց կաղնին:- Կապույտ զանգակաձաղիկը, փոքրիկ խատուտիկը նույնպես:

Կաղնին ուզում էր բոլորին տեսնել իր հետ: Նա ցանկանում էր, որ իր բոլոր սիրելիները իր կողքին լինեին:

- Մենք այստե՞ղ ենք, մենք այստե՞ղ ենք,- երգում և ձայնում էին նրանք:

- Իսկ որտե՞ղ է անցած ամռան անուշաբույր հողմաձաղիկը և հովտաշուշանը, որ գորգի պես նախանցած ամռանը փովել էր անտառում, և վայրի խնձորենին, որ գեղեցիկ ծաղկել էր, և մնացած բոլոր բույսերը, որ այսքան տարի զարդարել են անտառը: Երանի՜ բոլորն ապրեին մինչ այս պահը, միասին լինեինք:

- Մենք այստե՞ղ ենք, մենք այստե՞ղ ենք,- ավելի բարձր լսվեցին նրանց երգն ու ձայները, կարծես պատասխանողները բոլորից առաջ էին:

- Ո՛չ, սա չափազանց հիանալի է իրական լինելու համար,- ցնձաց կաղնին:- Նրանք բոլորը՝ փոքրերն ու մեծերը, ինձ հետ են: Ոչ ոք չի մոռացվել: Մի՞թե հնարավոր է նման երանություն:

- Աստճո արքայությունում ամեն ինչ է հնարավոր,- հնչեց պատասխանը:

Ու ծառը, որ շարունակում էր աճել ու ձգվել, զգաց, թե ինչպես են արմատները պոկվում հողից:

- Այսպես շնտ լավ է,- ասաց ծառը,- այժմ արդեն ես ազատ եմ, այլևս ինձ պահող շղթաներ չկան: Հիմա կարող եմ թռչել դեպի լույսի ու փառքի աղբյուրը: Ու իմ բոլոր հարազատները՝ փոքրերը և մեծերը, ինձ հետ են:

- Բոլորը:

Այսպիսին էր ծեր կաղնու երազը: Եվ մինչ նա երազում էր, սուրբծննդյան գիշերը հզոր փոթորիկ անցավ երկրի ու ծովի վրայով: Ծովն իր ծանր ալիքներով զարկվում էր ափին: Ծառը ճռնչաց, ճոճվեց և ի վերջո արմատահան եղավ հենց այն պահին, երբ նա երազում տեսնում էր, թե ինչպես է վեր բարձրանում: Կաղնին տապալվեց, ու նրա երեք հարյուր վաթսուներեք տարիներն ավարտվեցին այնպես, ինչպես օրաբզեզի մեկ օրը:

Սուրբծննդյան արևածագին փոթորիկը խաղաղվեց. լսվում էր եկեղեցիների զանգերի դողանջը, բոլոր, անգամ ամենաաղքատ գեղջուկի ծխնելույզից դրուփոյների խնջույքին զոհասեղանից բարձրացող շնորհակալական գոլորշու պես կապույտ ծուխ էր ելնում: Ծովը խաղաղվել էր, և գիշերային փոթորկին դիմացած մեծ նավի վրա ծածանվում էին բոլոր տոնական ու գեղեցիկ դրոշները:

- Ծառն այլևս չկա, հզոր փոթորիկը տապալել է մեր վիթխարի կաղնին, մեր կողմնորոշիչն այլևս չկա,- ասացին նավաստիները:- Ո՞վ է փոխարինելու նրան: Ավանդ, ոչ ոք:

Ահա ծառի մահախոսականը՝ կարճ, բայց ի սրտե: Նա ընկած էր ափամերձ ձյան ծածկույթի վրա: Եվ նավի վրա հնչում էր սաղմոս, որ երգվում է Սուրբծննդյան ուրախության և գոհաբանության, Քրիստոսով մարդկային հոգու փրկության երանության, հավերժական կյանքի շնորհի համար:

Այսօր տօն է Սուրբ ծննդեան, աւետիս,  
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս,  
Այսօր արեւն արդարութեան, աւետիս,  
Երեւեցաւ ի մէջ մարդկանց, աւետիս,  
Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս,  
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս:  
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ<sup>1</sup>:

Այսպես էր հնչում հին օրհներգը, և նավի վրա բոլորն իրենք  
իրենց օրհներգի ու աղոթքի շնորհիվ երկինք համբարձված  
էին զգում այնպես, ինչպես որ ծեր կաղնին Սուրբծննդյան  
նախօրեի գիշերն իր վերջին, ամենասքանչելի երագում:

---

<sup>1</sup> Բնագրում և բոլոր թարգմանություններում օգտագործված է տվյալ ազգի  
մոտ նշվող Սուրբծննդյան երգը: Այս թարգմանության մեջ օգտագործել ենք  
Սուրբծննդյան ավետիսի այն երգը, որ երգվում է Հայ Առաքելական Սուրբ  
Եկեղեցում:




# Բովանդակություն

Ճարպամուր	5
Ձնձաղիկը	9
Կարմիր մաշիկները	16
Աշխարհի ամենագեղեցիկ վարդը	27
Փոքրիկ իդայի ձաղիկները	32
Արքայադուստրը սիսեռահատիկի վրա	45
Անագե տոկուն զինվորիկը	48
Ջրի կաթիլը	57
Վայրի կարապները	60
Փոքրիկ Տուկը	87
Լուցկիներով աղջիկը	95
Ծեր կաղնու վերջին երագը	100



# Հանս Քրիստիան Անդերսեն



Թարգմանիչ և խմբագիր՝  
**Դավիթ Սամվելյան**  
Սրբագրիչ՝  
**Մարգարիտ Արիստակեսյան**  
Նկարիչ՝  
**Նաիրա Ահարոնյան**  
Համակարգչային ձևավորումը՝  
**Ալվարո Օհանջանյանի**

Գրքի շապիկի հակառակ կողմում պատկերված է  
Հանս Քրիստիան Անդերսենի բազմաթիվ  
թղթե ապլիկացիաներից մեկը:



**ԷԴԻՑ ՊՐԻՆՏ**  
Երևան, Դ. Մայրան 43  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)